№ 157 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 — 1907 — ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 № 157

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ԵՐԿՈՒ ռուբլի

Մի ամսվայ համար 1 ռուբլի

Երեկոյեան դասընթացքներ

մայրերի եւ դաստիարակչուհիների համար

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

(Միքայէլեան պրոսպ. № 138)

Գարապմունքների առարկաներն են՝ մանկավարժութիւն, մանկավարժական հոգեբանութիւն, մարդակազմութիւն և ֆիզիօլոգիա, առողջապահութիւն (գլխաւորապէս մանկան), առաջին օգնութիւն հասցնելը, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն, առօրեայ կեանքի քիմիա, մանկական պարտէզների թէօրիա, գործնական պարապմունքներ մանկական պարտէզներում։ Ունկընդրուհիների ընդունելութիւնը սեպտեմբերի 28-ից։ Գարապմունքների սկիզբը հոկտեմբերի 9-ից։

(առ.) (չ. ու.) 5—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական խնդիրը. Բարենորոգում Հայաստանի մէջ. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տաւրիկեան պալատից. Պատգամաւորական խորհրդակցութիւնները էջմիածնում. Կաթողիկոսի մահվան առիթով. Մտքեր և փաստեր. Կովկասագիտական կուսակցից. Թիֆլիսի քաղաքային Դումայում. Կաթողիկոսը. Թատրոն և երաժշտութիւն. Թիւրքահայ սովեալների օգտին. Նոր-Բայազետի գաւառի սովեալների օգտին. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Լօնդոնից. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—Եթէ սկզբնական ծախքերի համար տաք գիւղին մի քանի հարիւր ռուբլի, դուք հիմք կը դնէք գիւղական ուսումնարանի համար, իսկ յետոյ գիւղն ինքը կը պահպանէ դպրոցը։

Այդպէս են յորդորի ձայները, որ մենք լսում ենք շատ տեղերից։

Սկզբնական ծախքերը շատ դժուարացնում են գիւղացիներին, որովհետև ամեն մի նոր գործ խորթ է թրքում մարդկանց, երբ մանաւանդ մեծ զոհաբերութիւն է նա պահանջում։ Բայց բաւական է, որ դպրոցը բացվի և սկսէ արդիւնքներ տալ, այն ժամանակ գիւղական ժողովուրդը ոչ միայն հաշտվում է նրա գոյութեան հետ, այլ և առանձին բարոյական պարտաւորութիւն է համարում նրան պահպանելը։

Եւ կարելի է ասել, որ եթէ մենք ունենայինք դպրոցական մի այնպիսի ֆոնդ, որի դումարներով հիմնէինք դպրոցներ և ապահովէինք նրա սկզբնական ծախքերը, մենք կարող էինք ստեղծել դպրոցների մի խիտ ցանց, որ այնուհետև կը պահպանվէր ժողովրդական ոյժերով։

Դպրոցներ բանալու հոգսը պէտք է իրանց վրա վերցնեն յատուկ հիմնարկութիւններ և այդ նպատակով ժողովներ դումարեն։ Կրթական կարիքը չափազանց էական կարիք է, և նրան չէ կարելի մոռացութեան և դանցաւորութեան տալ։

Մեր հասարակութիւնը պէտք է լուրջ հոգածութեան առարկայ շինէ դպրոցական ցանցի կազմակերպութիւնը և նրան դարձնէ կանոնաւոր ու սիստեմական գործ։ Օրվայ տապ-տրութեան տակ մեր հասարակութիւնը հանդէս է բերում այս ու այն գործողի յիշատակին կրթարաններ հիմնելու առաջարկներ, իսկ յետոյ մոռանում է իր ծրագիրները մինչև մի նոր դէպք, երբ կրկին առաջարկվում են նոր ծրագիրներ։

Խրիմեան Հայրիկի յիշատակի յաւերժացման համար էլ ծրագրվեցին մի քանի տարբերակ դպրոցներ, այլ ևս չենք խօսում խոշոր կրթարանի մասին, բայց լուրջ գործ չէ երևում ասպարէզի վրա։

Դպրոցական ցանց կազմելու խնդիրն այն հերթական խոշոր հարցերից մէկն է, որ պէտք է անմիջապէս ընթացք ստանայ և մենք կարող լինենք մաքառել մասսայական անգրագիտութեան դէմ, որի շնորհիւ այնքան դանդաղում է մեր առաջադիմութեան գործը։

Դպրոցական խիտ ցանց կազմելու խնդիրը դրված է մեր հասարակութեան առաջ և մինչև այժմ դրական լուծում չէ ստանում գործնական կեանքի մէջ։

Սակայն մինչև երբ։

Ա. Ք.

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

—

Պուլկար Հեռագր. Գործակալութիւնը Կ. Պոլսէն հոկտեմբերի 27 թուականաւ հետևեալ հեռագիրը կը հաղորդէ.

«Մակեդոնիոյ երեք նահանգներուն համար Դոնէն ընդունուած ոստիկանական բարենորոգմանց ծրագիրը պիտի գործադրուի ամենէն առաջ Էրզրումի մէջ և յետոյ հայկական ուրիշ վիլայէթներու մէջ։ Այս որոշումը տրուած է կանխելու համար՝ Անգլիոյ նախաձեռնութեամբ՝ պետութեանց միջամտութիւնը»։

Անգլօ-ռուս համաձայնութեան մէջ Թուրքիոյ մասին ևս կարգադրութիւններ ընելու որոշումներ տրուած ըլլալու են, որ Սուլթանը Հայաստանի բարենորոգմանց սկսիլ որոշած է։ Բայց ինչպէս մենք, նոյնպէս պետութիւնները լաւ գիտեն թէ Թուրք կառավարութիւնը անընդունակ և անկարող է բարենորոգումներ գործադրելու, ուստի մեզ կը մնայ սպասել պետութեանց միջոցաւ գործադրելի բարենորոգումներուն։

(«Իրաւունք»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեր ստացած նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ախալքալաքի գաւառի այն գիւղերը, որոնք վնասվել էին կարկուտից, կրկին վնասվեցին վաղահաս ցրտերից, որովհետև բուսականութիւնը, որ մնացել էր կարկուտից ազատ, յետոյ դանդաղ էր աճում, ուստի և չը դիմացաւ ցրտահարութեանը։ Այդ գիւղերն էին՝ Մամզարա, Ջիգրաշէն, Օրաջալար, Խօջաբէկ, Սաֆխա, երկու Արագեաներ, Դանձա, Սաղամօ, Բօղանօվկա, Օրլօվկա։ Վերնասվեցին ցրտից բարձրադիր գիւղերը, որոնք ազատ էին մնացել կարկուտից, օրինակ՝ Փոկա, Խորեեիա, Թախչա, Էշտիա, Աբուլ։

Գաւառում կային տեղեր, ուր բերքը փոքր ի շատէ բաւարար էր, բայց առհասարակ դրութիւնը վատ է, իսկ մի քանի գիւղեր բոլորովին թշուառ վիճակի մէջ են։

—

Նիւ-Եորկից մեզ գրում են նոյեմբերի 3-ից (Ն. տ.).

Հոկտեմբերի 31-ին այստեղի ժուրիների դատարանը քննելով Յ. Թաւշանճեանի սպանութեան գործը՝ յանցաւոր ճանաչեց մարդասպան Համբարձումեանին և, նոյեմբերի 4-ին, 5 վայրկեան խորհրդակցութիւնից յետոյ, միաձայնութեամբ մահապարտ հրատարակեց։ Գլխատումը կամ էլեքտրական աթոռի վրա նստեցնելը նշանակված է դեկտեմբերի 16-ին։

Մարդասպանը, ինչպէս այժմ ստուգվել է, սերած է մահմեդական հօրից։

Սխալ է այն լուրը, թէ հանգուցեալ Թաւշանճեանը իր կտակի մէջ 100,000 դոլլար յատկացրել է իրան սպանողներին գտնելու համար. այդպիսի կէտ ամենևին չը կայ կտակի մէջ, որ գրված է 1895 թիւին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

(Սեփական թղթակցից)

—

Պետերբուրգ, 5 նոյեմբերի

Արդէն հեռագիրը հաղորդեց այսօրվայ ընտրութիւնների արդիւնքը, որը պարզեց հոկտեմբերեականների պօզիցիան և որը շատերի համար անսպասելի էր։

Դումայի նախագահի ընտրութիւնից յետոյ պէտք է ընտրվէին երկու փոխ-նախագահներ, քարտուղար և նրա օգնականը, որպէսզի կարելի լինի արդէն դիմել կանոնաւոր աշխատանքի, նախ և առաջ, ի հարկէ, քննել բոլոր պատգամաւորների ընտրութեան գործերը և վաւերացնել։

Ահա այդ հարցը որոշելու համար, թէ արդեօք ովքե՞ր լինեն փոխ-նախագահներ և այլն, բոլոր կուսակցութիւնները մի շարք ժողովներում աշխատում էին որոշել թեկնածուներ։ Այսպէս, օրինակ, ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը ունեցաւ մի քանի նիստեր ձախակողմեանների և խաղաղ բարենորոգման կուսակցութեան անդամների հետ (սոցիալ-դեմօկրատները չէին մասնակցում այդ խորհրդակցութիւններին), և վերջապէս որոշել էին առաջ մղել Մակլակօվի թեկնածութիւնը կադետների կողմից, իսկ Լվօվինը՝ խաղաղ բարենորոգման կուսակցութեան կողմից։ Հոկտեմբերեականները այս հարցումն էլ զիջողական տակտիկային էին հետևում և համաձայնվել էին աջակողմեանների հետ, և ահա սկսվում է կօմէդիան։

Նախ Մակլակօվը առաջարկում է գոնէ առժամանակեայ ընդունել երկրորդ Դումայում ընդունված նակազը, որով կարելի կը լինի կանոնաւորել Դումայի պարապմունքները. բայց բաւական էր երկրորդ Դումայի անունը տալ, որ աջակողմեանները այդ հարցը տապալէին, և այդպէս էլ եղաւ, ահագին մեծամասնութեամբ այդ հարցը տապալվեց։

Ուրեմն մնում էր Դումային նորից որոշել թէ ինչ ձևով կատարել ընտրութիւնները։ Երկար վիճաբանութիւնից յետոյ ընդունվում է Մակլակօվի առաջարկութիւնը, որ նախ ընտրեն երկու հոգու փոխ-նախագահներ և յետոյ նորից որոշեն, թէ որը նրանցից լինի նախագահի փոխանորդը։

Համաձայն արդէն ընդունված ձևի, նախ թերթիկներով որոշում են թեկնածուներ և ապա քուէարկութեամբ ընտրում. թերթիկներով գրաֆ Մեյենդորֆը ստանում է 263 ձայն, իշխան Վօլկօնսկին 259 ձայն, Մակլակօվը 133 ձայն և Լվօվը 118 ձայն։ Այդպէսով որոշվում է արդէն, որ հոկտեմբերեականները վճռել են գործել աջակողմեանների հետ և տապալել օպպօզիցիայի թեկնածուներին, չը նայած նրան որ Խոմեակօվը, իբրև անհրաժեշտ պայման, պահանջել էր իր կուսակցութիւնից, որ Մակլակօվին ընտրեն փոխ-նախագահ։

Քուէարկութեան մասնակցում են կադետների թեկնածուները, որպէսզի պարզեն, թէ ինչքան ձայն կարող են ստանալ ներկայ Դումայի կազմում, և որոշվում է, որ Մեյենդորֆը ստանում է 263 սպիտակ և 135 սև, Վօլկօնսկին 262 սպիտակ և 140 սև, Մակլակօվը 164 սպիտակ և 238 սև և Լվօվը 156 սպիտակ և 244 սև։

Ընտրված են համարվում առաջին 2-ը, այսինքն Մեյենդորֆը հոկտեմբերեականների կողմից, իսկ Վօլկօնսկին աջակողմեանների։

Դումային մնում է որոշել, թէ դրանցից որին ընդունել նախագահի փոխանորդ։ Այստեղ արդէն պարզվում է, որ հոկտեմբերեականները վաղուց վճռել են աջակողմեանների եղանակով պար գալ, առանց հակաճառութեան իրանց թեկնածուին տապալում են և բոլորը ձայն են տալիս Վօլկօնսկուն, իսկ Մեյենդորֆը արդէն ստանում է կադետների և այլն ձայները։ Այս դէպքը դալիս է ապացուցանելու այն կարծիքը, որ հոկտեմբերեականները ոչ մի ժամանակ չեն կարողանալու որոշ դիրք ձեռք բերել և միշտ խաղալիք են լինելու աջակողմեանների ձեռքին։

Քարտուղարի ընտրութեան հարցում հոկտեմբերեականները նոյնպէս հետևում են աջակողմեաններին, բայց այստեղ առաջ է գալիս մի ուրիշ միջադէպ։ Աջակողմեանների մէջ կայ երկու հոսանք, որոնցից մէկը կողմնակից է աւելի մեղմ քաղաքականութեան. դրանց շարքումն են Բօբրինսկին, Կրուպէնսկին, Սիմադիսօն և այլ, իսկ միւս հոսանքը իսկական մօնարխիստներն են՝ Գուրիկեվիչի, Մարկօվի, Սաղանօվիչի և այլոց ղեկավարութեամբ։ Եւ ահա այս երկու հոսանքի մէջ պայքար էր մղվում, թէ ով լինի քարտուղար, Սիմադիսօն թէ՞ Սաղանօվիչը. յաղթող հանդիսացան մօնարխիստները, և նրանց թեկնածու Սաղանօվիչը ստացաւ 245 սպիտակ և 164 սև, Սիմադիսօն ստացաւ 28 ձայն, իսկ Զեկնակովը (կ.-դ.) 147 սպիտակ և 255 սև քուէ։

Լեհական կօլօն և սոցիալ-դեմօկրատները ձեռնպահ էին բոլոր այսօրվայ ընտրութիւններին։

Ժամն արդէն 4-ն է, բայց դեռ նիստը շարունակվում է. այսօր պէտք է դեռ որոշվի քարտուղարի օգնականի ընտրութեան հարցը, պրէզիդիումի միւս անդամների հարցը, պէտք է ընտրվեն կօմիսիաներ պատգամաւորների ընտրութեան գործերը քննելու համար և մի շարք ուրիշ հարցեր, որոնց մասին կը գրեմ հետևեալ անգամ։

Արսէն Բալանթար

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—

Էջմիածին, 7 նոյեմբերի

Նախորդ նամակովս հաղորդել էի նոյեմբերի 5-ի խորհրդակցութեան մասին, որ շօշափում էր միայն թաղման հանդիսի վերաբերեալ կարգադրութիւնները, և գլխաւորապէս դամբանական ճառեր արտասանելու կամ չը արտասանելու խնդիրը։

Այժմ ես կը նկարագրեմ այն ժողովները, որոնց խորհրդածութիւնները վերաբերում էին համազգային մեծ կարևորութիւն ունեցող խնդիրներին։

Թաղման օրը, նոյեմբերի 6-ի երեկոյեան, վեհարանում թէյից յետոյ նշանակված էր պատգամաւորական ժողով։ Նիստը, որին մասնակցում էին էջմիածնում գտնվող պատգամաւորները (մի մասը արդէն հեռացել էր), բաց արեց կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսը մի համառօտ, բայց լաւ ու դիւրըմբռնելի ճառով։ Նա նկարագրեց նորից վանքի ու ճեմարանի ծանր դրութիւնը, կոչ արեց մտածել նրա ապահովութեան մասին։ «Վեհափառի դիմումը՝ օգնել այդ գործում, անպատասխան, մնաց—ասում է սրբազանը,—և դա շատ տարօրինակ է։ Ճեմարանի համար հանգուցեալ վեհափառը նախահաշիւ էր կազմել տուել, բայց վերահաս մահով անկատար մնաց ապահովութեան գործը։ Պէտք է հոգալ այդ մասին. հարկաւոր է 50,000 ռուբլի մի գումար, ապա թէ ոչ ճեմարանը կը փակվի։ Կը տաք՝ կը պահենք, չէք տայ՝ կը փակենք։ Վերադառնալով ձեր տեղերը աշխատեցէք, որպէսզի ազգը հոգայ այդ մասին։ Մեր մեծ ծախսը ճեմարանն է. միջոց չունենք ապահովելու, նոյնիսկ հոգալու նրա անհրաժեշտ պէտքերը։ Անտարբեր մի լինէք թէ դուք, թէ ձեզ ուղարկող հասարակութիւնը։ Ազգային այդ երկու մեծ հաստատութիւններից բացի ինչ ունենք, բայց նրանք ամենքին հիասթափութիւն են պատճառում։ Այսօր Փոխարքայի ներկայացուցիչ Հակիկեանը նկատեց ինձ. «Ի՞նչ է վանքի դրութիւնը»։ Այո՛, չափազանց անշուք են ու անապահով մեր այդ հաստատութիւնները։ Մեր նեցուկը եկեղեցին է ու լեզուն, վանքը և ճեմարանը. պէտք է հոգ տանել նրանց ապահովութեան ու բարեկարգութեան մասին»։ Ապա տեղապահ սրբազանը հրաւիրելով պատգամաւորներին շարունակել ժողովը և խորհրդակցել կարևոր հերթական խնդիրների (ճեմարանի, վանքի, կաթողիկոսական ընտրութիւնները շտապեցնելու) մասին՝ ինքը հեռացաւ։

*

Տեղապահ սրբազանի հեռանալուց յետոյ ժողովը դիմեց նախագահի ընտրութեան։ Նախագահ առաջարկվեցին Ս. Յարութիւնեան, Ա. Ահարոնեան և Մ. Բերբերեան. առաջինը և երրորդը հրաժարվեցին, այդպիսով նախագահեց Ա. Ահարոնեանը։

Նիստը բանալով, նախագահը բացատրեց խորհրդակցութիւնների բուն նպատակը, շեշտելով որ «մեզ վրա պարտք է դրվում հոգալ, որպէսզի մեր ազգային այդ երկու մեծ հաստատութիւնները դրված լինեն իրանց կոչման բարձրութեան վրա»։ Այնուհետև նախագահը յիշեցրեց, որ նախորդ օրվայ ժողովում ընտրվել էր իրաւաբանական մի յանձնաժողով՝ բաղկացած Բերբերեանից, Զուբարից, Ս. Յարութիւնեանից, Դօլուխանեանից, Ամիրխանեանից, Ա. Առաքելեանից և այլն, որոնք, քննելով կաթողիկոսական ընտրութիւնները շտապեցնելու խնդիրը պօլօժենիայի հիման վրա, պէտք է զեկուցանէին ժողովին այդ մասին։ Ահա այդ զեկուցումից բացի, ժողովը քննութեան նիւթ պէտք է դարձնի նաև ճեմարանի ու Հայրիկի անունով ֆոնդ հիմնելու խնդիրները։ Արդ՝ ցանկալի էր իմանալ, թէ ժողովը նախ ո՞ր խնդրով կուզէր զբաղվել։

Խօսք է խնդրում Զաւարեան։ Նա առաջարկում է նախ կատարել Խրիմեանի վերաբերմամբ ունեցած պարտականութիւնը, հիմնել կրթական ֆոնդ Հայրիկի անունով։

Ս. Յարութիւնեան և ուրիշները պարզում են, որ Հայրիկի անունը յաւերժացնելու համար կրթական ֆոնդ հիմնելու խնդիրը սկզբունքով արդէն ընդունվել է նախորդ ժողովում։

Նախագահը նորից է քուէարկում այդ առաջարկը, և սկզբունքով միաձայն ընդունվում է Հայրիկի յիշատակը կրթական ֆոնդով յաւերժացնելու խնդիրը։

Զաւարեանը խնդրում է թոյլ տալ իրան շարունակելու իր ընդհատած ճառը ինչպէս յաւերժացնելու մասին։ Նախ պէտք է ի նկատի առնել, թէ ո՞րն է համապատասխանում նրա բաղձանքներին և ո՞րն է անհրաժեշտ մեզ համար, այսինքն ինչ տեսակ հաստատութիւն։ Գէորգն ու Ներսէսը անմահ են իրանց հիմնած դպրոցներով, ուստի նա առաջարկում է հիմնել կրթական ֆոնդ Հայրիկի անունով։ Ունենալով իւրաքանչիւր տարի մի քանի 100,000 ռուբլի՝ կարելի է բաց անել Հայրիկի անունով երկու ուսուցչանոց հայութեան երկու հատուածներում՝ մէկը Ռուսաստանում, իսկ միւսը Թիւրքահայաստանում։ Մանկավարժութեան բացակայութեան շնորհիւ դպրոցական գործը կաղում է մեզանում։ Ուսուցչանոցը բաւարարութիւն կը տայ տարրական կրթութեան, կը տայ մասնագիտական հմտութիւն։ Ուսուցչանոցի բացակայութեան շնորհիւ ուսուցիչների մեծ պակասութիւն կայ։ Ճեմարանը չէ կարող բաւարարութիւն տալ մասնագիտական մանկավարժական հիւղին (մի քանի տեղից խուլ ձայնով նկատում են՝ այժմ Ներսիսեան դպրոցը տալիս է)։ Ապագայ ֆոնդի մի մասը պէտք է յատկացնել նախ ուսուցչանոցներին։ Նուիրատուութեան տեսակէտից կարևոր է, որ ֆոնդը յատկացվի 2 մասերի՝ Ռուսաստանի և Վասպուրականի Տարօնում հիմնվելիք ուսուցչանոցներին։ Վերջում առաջարկում է ընտրել կենտրոնական մի մարմին հանգանակութիւնը հէնց այժմից սկսելու համար։

Գեանջեցեան—Լ. «Ոչ ոք դէմ չէ, որ պէտք է յաւերժացնել Հայրիկի անունը, բայց պէտք է ի նկատի առնել և ժողովրդի դրութիւնը, որ ներկայումս գտնվում է ծայրայեղ վիճակի մէջ։ Այնպիսի մի խոշոր նպատակի համար դրամական հանգանակութիւն սկսելը շատ դժուար իրագործելի է։ Եթէ, ինչպէս երեաց տեղապահ սրբազանի ասածներից, կաթողիկոսը չէ կարողացել իրագործել իր ձգտումը և ապահովել ճեմարանը, դա լաւ ապացոյց է ասածներիս։ Ապա, քննադատելով Զաւարեանի արտայայտած թիւր կարծիքները մեր ուսուցիչների ու ճեմարանի մասին, առաջարկում է ուսուցչանոցի խնդիրը կապել ճեմարանի հետ և ֆոնդը գործադրել ճեմարանի վրա։

Նախագահի առաջարկութեամբ ժողովը սահմանափակում է ճառերը 5 րոպէով։

Մ. Զմէչեանը խօսք խնդրելով և ծիծաղ պատճառելով յայտնարարում է, որ Գեանջեցեան

ցեանի առաջարկը իրանն է և նա արել է նախորդ օրվայ ժողովում։

Մ. Բերբերեանը (ճեմարանի տեսուչ) բացատրում է, որ ճեմարանը արդէն ուսուցչանոց է. առաջարկել նոր ուսուցչանոց հիմնել, այդ նշանակում է զրախօսութիւն անել։ Ուսուցչանոցը առնուազը պահանջում է 400,000 ռուբլի, մինչդեռ պատրաստի ճեմարանը ծառայել է և ծառայում է իր նպատակներին։

Բաբգեն վարդապետը (սինոդի անդամ, ճեմարանաւարտ) նկատում է, որ ճեմարանի ծրագիրը գործիք է դարձել այս կամ այն տեսչի ձեռքին։ Եւ դեռ հարց է՝ ճեմարանը տուել է հոգևորականներ և ուսուցիչներ։ Իր կողմից առաջարկում է զիւղատնտեսական դպրոց հիմնել այդ ֆոնդով։

Ե. Լալայեան.—«Հայրիկը հիմնել է մի թանգարան, որ կոչվում է Հայրիկեան թանգարան և որը փայլում է իր դատարկութեամբ։ Դա յիշեցնում է հայերիս անկուլտուրականութիւնը։ Առաջարկում եմ ֆոնդը յատկացնել թանգարանին և զբաղով յաւերժացնել յիշատակը»։

Հ. Առաքելեանը առաջարկում է այդ ֆոնդը գործադրել ճեմարանի վրա, հիմնելով ճեմարանին կից ուսուցչանոց «Հայրիկեան» անունով, որի շնորհիւ ապահովված կը լինէր և ճեմարանի գոյութիւնը։

Վռամեանը («Հայրենիք» և «Բազմիկ» թերթերի ներկայացուցիչը) նկատում է, որ ճեմարանը չէ ծառայել Թիւրքիայի հայութեան, ճեմարանաւարտներից ոչ ոք չէ գտնում Թիւրքիայի գաւառները։ Առաջարկում է այդ ֆոնդով զիւղական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու կուրսեր բանալ, այլ ոչ ուսուցչանոցներ։

Գարեգին վարդապետը, թելով ճեմարանի մատուցած ծառայութիւնները, միանում է Բերբերեանի և Գեանջեցեանի առաջարկին։

Յովսեփ Արղութեանը առանց այն էլ սառնութիւն է նկատում հայութեան երկու հատուածների՝ ռուսահայերի և Թիւրքահայերի միջև. երկու տեղերում առանձին ուսուցչանոց հիմնելով զատուելը կատարեալ կը դառնայ. ուստի առաջարկում է հիմնել մի որևէ դպրոց, մեծ թէ փոքր այդ միևնոյն է, Հայրիկի անունով իր ծննդավայրում՝ Վասպուրականում։

Բժ. Ա. Բաբայեանը յիշեցնում է, որ կրթական ֆոնդի գաղափարը նոր չէ, որ նա յարուցվել է առաջ էլ, բայց չէ իրագործվում։ Դրա համար միջոց է հարկաւոր։ Նա աւելի նպատակայարմար է համարում Հայրիկի անուան ֆոնդով բարւոքել ճեմարանի դրութիւնը, ծանրելով մասնագիտական և մանկավարժական ճիւղեր։

Առաքել Բաբախանեան (Լէօ).—«Թարմ տպաւորութեան տակ շատ ծրագիրներ են յղանում ժողովում։ Մեր իրականութիւնը, գոնէ, այդ է ցոյց տալիս։ Ես համոզված եմ, որ ներկայ եղողներից շատերը ֆոնդի աջողութեանը չեն հաւատում։ Թողնենք աւելի գործնական կերպով։ Մեր ճեմարանը բաւարարութիւն տալիս է մեզ, այնտեղից աւարտողները գնում են գիւղեր, շատերը նոյնիսկ տեղ չեն գտնում։ Ուսուցիչներ կան, բայց դպրոցներ չը կան, ուստի առանձին ուսուցչանոցի անհրաժեշտութիւն չը կայ։ Ես բարոյական պարտք եմ համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այդ ահեղագոչող հիմնարկութեան վրա, որին իրական օգնութիւն ցոյց տալ կարելի է միայն իսկական ժողովրդական ներկայացուցչութեամբ։ Ճեմարանը Թիւրքահայերի վերաբերմամբ էլ ծառայում է իր նպատակին, ուսուցանում է 30-ից աւելի աշակերտներ։ Միջոց ստեղծեցէք, և ճեմարանը օգտակար կը լինի ժողովրդին, մեծ արդիւնքներ կը տայ։ Առաջարկում է այդ ֆոնդով վերակազմել լսարանական բաժինը։

Այնուհետև սկսվում են առաջարկութիւնների ձևակերպութիւնները։

Ս. Յարութիւնեան.—«Կրթական ֆոնդը մի հաստատութիւն է, որը ծառայելու է երեք երկիրների հայութեան մէջ գիւղական դպրոցների բացման։ Ուստի առաջարկում եմ յաւերժացնել Հայրիկի յիշատակը՝ հիմնելով կրթական ֆոնդ և ծառայեցնելով նրան նախ ստորին, միջնակարգ ու ապա մասնագիտական դպրոցներին»։

Զաւարեանը առաջարկում է ուսուցչանոցներ բանալ. մէկը՝ Ռուսաստանի որևէ հայաշատ կենտրոնում, իսկ միւսը Թիւրքահայաստանում՝ Վասպուրականի Տարօնում։

Ե. Լալայեան՝ հարստացնել Հայրիկեան թանգարանը։

Լ. Գեանջեցեան՝ ճեմարանը բարեկարգել։

Հ. Առաքելեան՝ ճեմարանին կից հիմնել ուսուցչանոց Հայրիկեան անունով։

Ց. Աղուբեան՝ Վասպուրականում հիմնել Հայրիկեան միջնակարգ դպրոց։

Վ. Ռամեան՝ հիմնել Հայրիկի անունով ֆոնդ գիւղական ուսուցիչներ պատրաստելու համար։

Բաբգեն վարդ.՝ հիմնել գիւղատնտեսական դպրոց Թիւրքիայում։

Այսպիսով բոլոր առաջարկների մէջ ֆոնդի սկզբունքը ամենքն են ընդունում, տարբերութիւնը ֆոնդի գործադրութեան հարցի մէջն է միայն։ Այդ պատճառով նախագահը քուէարկութեան է դնում ֆոնդը՝ իբրև հիմնական առաջնակարգ միջոց, որը և միաձայն ընդունվում է։

Այնուհետև քննվում է այն հարցը, թէ ինչ ձևով պիտի յաւերժացնել կամ ինչ բանի համար գործադրել այդ ֆոնդը։

Մ. Բերբերեանը առաջարկում է կազմել արձանագրութիւն՝ ցանկութիւն յայտնելով ֆոնդ հիմնել Հայրիկի յիշատակը յաւերժացնելու համար և հրաւիրել յատուկ պատգամաւորական ժողով ֆոնդի իրագործման ձևը պարզելու։

Զաւարեանը նկատում է, որ այդ առաջարկով ուզում են թաղել Հայրիկի յիշատակը յաւերժացնելու հարցը։ Ուստի առաջարկում է նախագահին ուղղակի առանց յետաձգելու քուէարկել առաջարկները։

Այդ նկատողութեան դէմ մի քանի հոգի բողոքում են, և նախագահը յայտնում է, որ ֆոնդի գաղափարը արդէն ընդունվեց և թաղելու հարց չէ կարող լինել։

Դրանից յետոյ սկսվում է առաջարկութիւնների քուէարկութիւնը, որից պարզվում է, որ ոչ մէկն էլ չէ ընդունվում, թէև համեմատաբար աւելի շատ ձայն է ստանում (32) Զաւարեանի առաջարկը։ Վերջինս տաքանում է և աշխատում է համոզել, որ իր առաջարկը պէտք է ընդունված համարել, որովհետև ուրիշների համեմատութեամբ աւելի ձայն է ստացել։ Նախագահը բացատրում է, որ նրա առաջարկն էլ չէ ընդունված, որովհետև ձայների կէսից անդամ շատ պակաս է ստացել։

Սկսվում են հակաճառութիւններ թեր և դէմ։

Որովհետև ձայների մեծամասնութիւն չէ ստացվում, ուստի ժողովը որոշում է հարցի լուծումը թողնել մի ուրիշ պատգամաւորական ժողովի վրա։ Նախագահը, նիստը փակված յայտարարելով, հեռացաւ դահլիճից. նրա հետ ցրվեց և ժողովականների մեծ մասը։

Դժգոհների մի խումբ Ս. Զաւարեանի ու բժ. Մուրադեանի ղեկավարութեամբ ու մի քանի կողմնակի անձանց և համախոհների մասնակցութեամբ վճռեց շարունակել ժողովը. այդ միջոցին ներս եկան և 3—4 հոգի դուրս գնացած պատգամաւորներից։ Զաւարեանը սկսեց տաքացած բացատրել, որ 5 ժամվայ վիճաբանութեան նպատակն էր թաղել Հայրիկի անունը առանձին զորձով յաւերժացնելու միտքը։

Այդ կարծիքին ու արած ակնարկին միացաւ բժ. Մուրադեանը նոյնպէս։ Վերջինս և իր մի քանի ընկերները առաջարկեցին յատուկ բանաձև կազմել այդ իմաստով և մեղքն ամբողջապէս բարձել նախագահի ու մի քանի անձանց վրա, որոնք իբր թէ խանգարեցին ժողովը և թաղեցին հարցը։

Ժողովականներից ոմանք հարց բարձրացրին՝ ժողովը համարձակ, արդեօք, շարունակութիւն թէ՞ առանձին ժողով, որովհետև հազիւ 40 հոգի էր մասնակցում։ Մի քանիսն էլ առարկում էին, որ անկարելի է ժողովը նոյնիսկ շարունակել։ Ոչ մի համաձայնութեան չը գալով, ժողովը, այնուամենայնիւ որոշեց յաջորդ օրը առաւօտեան ժամը 8-ից հաւաքվել ժողովը շարունակելու և միաժամանակ յայտնել այդ մասին էջմիածնից դեռ ևս չը հեռացած պատգամաւորներին։

Ժողովականները այնուհետև հեռացան իրանց տները։

Լ. Դանիէլեան

(Կը շարունակվի)

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Մենք ստացանք հետևեալ հեռագիրը.

Պերօվսկ, 13 նոյեմբերի 10 ժ. 25 ր. առ.

Տեղեկանալով մեծ ժարդու մահվան ժամին, խնդրում ենք միացնել մեր վիշտը բոլոր հայերի վշտի հետ։

Պերօվսկի հայ գաղութ

—

Մերվ, 6 նոյեմբերի

Վեհափառի կաթողիկոսի թաղման առիթով այսօր, այստեղ էլ, հայոց աղօթատունը հոգեհանդիստ կատարվեց։ Բոլորն էլ շտապել էին ներկայ լինել պատարագին և հոգեհանդստին։ Պատարագիչ Ալ. քահանայ Պապովեանը քարոզ խօսեց, վերջն էլ խնդրեց հասարակութիւնից, որ ի յիշատակ հայոց Հայրիկի այսօրվանից փող հաւաքեն յօգուտ Կովկասի սովեալ հայերի։ Պատարագի վերջը, հոգեհանդստի ժամանակ, եկեղեցի եկան գաւառապետը և պրիստաւը։ Ներկայ էր թուրք ընտիր հասարակութիւնը, գլուխ ունենալով իրանց մօլլային։ Ներկայ էին և բարիտները և Պարսկաստանի հրէաները։ Թուրքաց մօլլան իր կողմից հոգեհանդիստ կատարվեց, վերջն էլ քարոզ խօսեց, ցաւակցութիւն յայտնեց հայ ազգի թանգագին կորստի համար և աւելացրեց, որ «մենք թուրքերս էլ ձեր եղբայրներն ենք. ցանկանք, որ միշտ սիրով լինենք, միասին հաշտ ապրենք, մոռանանք անցեալի թշնամութիւնը»։ Հոգեհանդստից յետոյ քահանան հասարակութեան կողմից շնորհակալութիւն յայտնեց գաւառապետին և թուրք հասարակութեան։

Այսօր ամբողջ օրը հայերի խանութները փակ էին, իսկ թուրքերը միայն հոգեհանդստի ժամանակ փակեցին։

Ամսիս 3-ին հայ թատերասէրները պէտք է ներկայացում տային. վեհափառի մահվան լուրը ստանալով, յետաձգեցին երկու շաբաթով։

Գէորգ Հայրապետեան

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

—

Այժմ հայութեան առաջ դրված են երկու կարևոր հարցեր։

Առաջինը Թիւրքաց Հայաստանի ըէֆորմների և Թիւրքահայ սովեալներին օգնելու խնդիրն է, իսկ երկրորդը՝ նոր կաթողիկոս ընտրելու խնդիրը։

Առաջին հարցի մասին մենք առ այժմ չենք խօսի, մինչև որ պարզվի ըէֆորմների այն ծրագիրը, որ, ըստ նոր տեղեկութիւնների, մշակվել է մի քանի պետութիւնների կողմից Հայաստանի մասին։ Դալով Թիւրքահայ սովեալներին օգնելու գործին, մենք պէտք է ասենք, թէ քանի որ ռուսաց բարձր կառավարութեան կողմից հաստատված է այն Նպաստամատոյց Ցանձնաժողովը, որ ընտրվեց Թիֆլիսում և հաստատվեց հանգուցեալ կաթողիկոսի կօնդակով այս տարվայ մայիսին, ուստի մեզ մնում է միայն ամեն ջանք գործ դնել, որ մի մեծ և լայն հանգանակութիւն բացվի ի նպաստ Թիւրքահայ սովեալների և հանգանակված դրամը գործադրվի բուն նպատակին։ Հայ ժողովուրդը, եթէ, իրօք, կամենում է իր թշուառ և սովեալ եղբայրներին օգնութեան ձեռք կարկառել, պէտք է իր նուէրները այլևս ցրիւ չը տայ, այլ կենտրոնացնէ հաստատված Ցանձնաժողովի մէջ, որից հնարաւորութիւն կը լինի ամեն րօպէ հաշիւ պահանջել և որը միայն հնարաւորութիւն ունի լիգալ և օրինական ձևով տանել օգնութեան գործը։

Այս խնդրին դարձեալ կը վերադառնանք։

Այժմ դիմենք կաթողիկոսական ընտրութեան հարցին։

Այդտեղ, իբրև առաջնակարգ կարևորութիւն ունեցող, հանդէս են գալիս հետևեալ հարցերը.

1) Ե՞րբ պէտք է կատարվի կաթողիկոսական ընտրութիւնը.

2) Պէ՞տք է նա կատարվի բացարձակ, յայտնի քուէարկութեամբ, ինչպէս մինչև այսօր եղել է, թէ՞ գաղտնի քուէարկութեամբ.

3) Կարելի՞ է կաթողիկոսական կանդիդատների կամ ընտրելիների ցուցակի մէջ մտցնել վարդապետ կամ աշխարհական թէ ոչ. և արդեօք թոյլատրելի և հնարաւոր է այդ թէ հայոց եկեղեցու օրէնքներով և թէ տիրող գործադիր օրէնքով, այն է պօլօժենիայով.

4) Ի՞նչ ձևով պէտք է մասնակցեն Թիւրքիայի հայերը այս անգամ. արդեօք մնն ձևով, որով նրանք մասնակցում էին մինչև վերջին, այն է՝ Խրիմեանի ընտրութիւնը, թէ՞ այն ձևով, որով կատարվել է նրանց մասնակցութիւնը նախորդ բոլոր ընտրութիւնների ժամանակ, այն է՝ ազգային ժողովի կողմից ընտրված երկու պատգամաւորների (իբրև ներկայացուցիչների ամբողջ Թիւրքիայի հայ ժողովրդի) ձեռքով.

5) Թիւրքահայերի թեմերի թիւը պէտք է 45 ընդունել, ինչպէս մինչև այսօր ընդունված էր, թէ՞ 65, ինչպէս պահանջում են Թիւրքահայերը.

6) Ի՞նչ կանդիդատներ կամ ընտրելիներ կան Ռուսաստանի և Թիւրքիայի հայ եկեղեցականութեան մէջ, յարմար կոչվելու կաթողիկոսական աթոռին.

7) Արդեօք չը պէտք է օգտվենք կաթողիկոսի ընտրութեան համար գումարվող համազգային ժողովի ներկայութեամբ և այժմ իսկ մշակենք մի քանի ազգային-եկեղեցական կարևոր հարցերի օրակարգ, որոնց լուծումը անյետաձգելի է, որպէսզի եկող պատգամաւորները լիազօրութիւն ունենան զբաղվել և այդ հարցերի քննութեամբ։

Ահա մի շարք հարցեր, որոնց քննութեամբ մենք կը զբաղվենք հետզհետէ։

Շահրիար

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻՑ

—

Ուրբաթ, նոյեմբերի 8-ին, Մ. Ի. Թամամշեանի «Արևելքի կրօնների պատմութեան» երկրորդ դասախօսութեան նիւթն էր մահմեդական կրօնի ծագման գլխաւոր պատմական շարժառիթները և Մուհամմեդի կեանքի առաջին շրջանը՝ մինչև մարգարէ հռչակվելը։

V դարի վերջերին և VI-ի սկզբին արաբները արդէն չունէին կրօնական հաւատալիքների ամուր հիմքեր և այդ հիմքերը խախտվելու վրա էին երկու գործօնների ազդեցութեան տակ՝ մովսիականութեան և քրիստոնէութեան։ Հրէաները Երուսաղէմի կործանումից յետոյ ապաստան էին գտել և Արաբիայում. նրանք այդտեղ ուներին իրանց գաղութները, օրինակ Եաթրեպայում—Մեդինայում։ Բայց հրէաները չը կարողացան տիրանալ արաբների կրօնական աշխարհահայեացքին. յայտնի է, որ հրէաները, յափշտակված Միսսիայի գաղափարով, չէին էլ ձգտում քարոզչութեան այլ ազգերի մէջ և միշտ հաւատել են իրանց կրօնը՝ ընտրեալ ցեղի—Իսրայէլի սեփականութիւն։ Բայց և այնպէս կար արդէն արաբական մի տիրապետութիւն—Եմենի շրջանը,—որի մէջ մովսիականութիւնը յայտարարված էր իբրև պետական կրօն։ Քրիստոնէութիւնը Արաբիա մուտք էր գործում երկու տեղից՝ Հաբեշստանից և Սիրիայից։ Քրիստոնեաները նոյնպէս ունէին իրանց գաղութները, կային անգամ քրիստոնեաներով բնակեցրած արաբական քաղաքներ։ Բայց այս կրօնը անզօր էր տիրանալու արաբներին. սրանց բիւրեղի պէս պարզ, դրական խելքին եւ երեւակայութեան խորթ էին միանգամայն քրիստոնէական վերացական գաղափարները։ Եւս առաւել, որ գաղութների քրիստոնէութիւնը նոյնպէս շղված էր այդ ուսման բուն էութիւնից։

Այսպէս թէ այնպէս՝ արաբներն արդէն IV դարից թողած զանազան կռապաշտական ձևերը՝ ձգտում էին միասուռածութեան, Աբրահամի կրօնին, և մեծ նշանակութիւն էին տալիս Մեքքայի հողին, որ կոչված էր այդ անուան հետ։ Մի աստուած պաշտողները—հանիֆներ (առաքինի մարդ)—յարգված անձեր էին։ Մեքքան դեռ յայտնի էր առաջին դարից (Ք. յ.) և V դարում նա ստանում էր սրբազան նշանակութիւն։ Նա սեփականութիւն էր Կorեյշա ցեղի, սակայն խլված այդ ժամանակ մի աւելի քաջ ցեղի ձեռքով։ Մուհամմեդի պապերից մէկը՝ խեշոք Կoսայը կարողացաւ նորից ձեռք բերել հայրենական հողը և Մեքքան դարձնել ազնուապետական հանրավարութիւն։ Կoսսայից առաջացան երկու սերունդ, որ նշանաւոր դեր կատարեցին արաբական նուաճումների ժամանակ. այդ սերունդները կոչվում էին Հաշիմիդներ և Օմայեադներ։

Ո՛չ մի տիեզերական կրօն չէ ծագել այնքան լոյսի տակ, վերծ զանազան աւանդութիւններից, ինչպէս մահմեդական կրօնը. մենք կարող ենք քայլ առ քայլ հետևել ճիշտ պատմական փաստերի վրա հիմնված այդ ուսման և նրա հիմնադրի կեանքին։ Մուհամմեդը ծնվել է 570 թ-ին, ապրիլի 21-ին. յարգված Կoրեյշա ցեղի այս ժառանգը սակայն իր հօր Աբդուլլայի մահից յետոյ ստացաւ ընչին ժառանգութիւն՝ հինգ ուղտ, մի քանի ոչխար և մի սեւամորթ սարկուհի։ Մանուկ Մուհամմեդը, ըստ արաբական սովորութեան, մնաց ոչ քաղաքում, իր մօրից, այլ չուտով բեդուին կնոջից, որը սակայն վախենալով թոյլ ժանկան վիճակից—մանուկը ընկնաւոր էր—շուտով վերադարձրաւ իր մօրը։ Արդէն 10 տարեկան Մուհամմեդին նրա հօրեղբայր Աբու-Թալէպը (շիաներից յարգված Ալիի հայրը) վերցնում է իր գործի մէջ և առևտրական ճանապարհորդութիւններ կատարում հետը Եգիպտոս և Սիրիա։ Այդ ճանապարհորդութիւնների ժամանակ էր որ Մուհամմեդը, ըստ աւանդութեան, ծանօթանում է Բասրայում քրիստոնեա մի վարդապետի հետ, Սարգիս անունով։ Մեծանալով Մուհամմեդը՝ մասնակցում է ցեղական պատերազմներին, հրաշակվում իր քաջութեամբ և աւելի իր առաքինութեամբ, ստանալով «շիտակ մարդու» տիտղոսը (էլ-ամին)։ Երիտասարդ Մուհամմեդը պակվում է իր ազգական այրի Հաջիջայի հետ, որը 19 տարով նրանից մեծ էր և որի առևտրական գործերը նա վարում էր ամենայն հաւատարմութեամբ։ Հաջիջայի առաջին ամուսնուց Ֆաթմա աղջիկը ապագայում դառաւ Ալիի կինը։

Մուհամմեդը, ըստ պատմագրերի վկայութեան, միջահասակ, գեղեցիկ և շատ հմակրելի անձնաւորութիւն էր։

Պ. Զ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

—

Ամսիս 12-ի երկուշաբթի օրվայ քաղաքային դումայի հերթական նիստը խոստանում էր շատ աղմկալից լինել։ Այդ նիստում, բացի քարտուղարի ընտրութիւն կատարելը, պիտի քննվէր և անասնաբոյժ պ. Բ. Վարդանեանի «Մշակի» ընթերցողներին արդէն ծանօթ խնդիրը։ Գուցէ հէնց այդ պատճառով էլ նիստը սովորականից շատ աւելի ուշ սկսվեց. ժամը 9-ին հազիւ կարողացան ձայնաւորները վերջացնել իրանց մանաւոր խորհրդակցութիւնը ու ժողովարանը հաւաքվել։

Ժողովը բացվեց քաղաքագլուխ պ. Զերքեզովի նախագահութեամբ, որը ամենից առաջ առաջարկեց դումային ոտքի կանգնելով յարգել նորերս վախճանված եպիսկոպոս Ալէքսանդրի յիշատակը։ Ցարգանքի այդ տուրքը վճարելուց յետոյ, ժողովը անցաւ իր հերթական հարցերին։

Մի երկու փոքրիկ հարցապնդումներից ու քաղաքային վարչութեան ուուած բացատրութիւնները լսելուց յետոյ, ժողովը դիմեց քարտուղարի ընտրութեան հարցին։ Ամենից առաջ հարց ծագեց, թէ քանի՞ տարի ժամանակով ընտրել քարտուղարը. թողնե՞լ արդեօք նախկին 4 տարվայ ժամանակամիջոցը, թէ ոչ՝ աւելի կարճ ժամանակով ընտրել։ Դրանից յետոյ պիտի որոշվէր ռոճիկի հարցը։ Որովհետև, օրէնքի համաձայն, քաղաքային վարչութեանը վերաբերեալ խնդիրներ քննելու ժամանակ քաղաքագլուխը իրաւունք չունի նախագահելու, ուստի նա հեռացաւ նախագահական աթոռից, հրաւիրելով բժ. պ. Մ. Լունկեվիչին իր տեղը բռնել։

Առաջին հարցը, ինչպէս ասացինք, այն էր, թէ քանի՞ տարի ժամանակով ընտրել քարտուղարը։ Առաջարկութիւն եղաւ ընտրել 2 տարի ժամանակով, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ձայնաւորներից շատերը նոր են, ուստի կարող է պատահել, որ անպող ընտրութիւն անեն և ստիպված լինեն չորս տարի շարունակ տանել իրանց սխալմունքը։

— Եթէ մենք սխալմունքից չենք վախենում և չորս տարով քաղաքագլուխ ու քաղաքային վարչութեան անդամ ենք ընտրում, ինչու՞ ուրեմն այդպիսի հաշիւներով պիտի զեկավարվենք քարտուղարի ընտրութեան ժամանակ։

Այսպէս առարկեց ձայնաւոր պ. Էլիավա 4 տարվայ ժամանակամիջոցի կողմնակիցների կողմից։

Որոշվեց քուէարկել այդ հարցը։

Երկրորդ խնդիրը քարտուղարի ռոճիկի հարցն էր։ 70-ական թուականներից ի վեր քաղաքային վարչութեան քարտուղարը ստանում է 2000 ռուբլի տարեկան։ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ ժամանակներից դէսը ապրուստը չափազանց թանգացել է Թիֆլիսում, առաջարկութիւն եղաւ ոմանց կողմից 2400 ռուբլի դարձնել քարտուղարի ռոճիկը, իսկ ոմանց կողմից էլ 2600 ռուբլի դարձնել։

Որոշվեց այդ հարցն էլ քուէարկել առաջինի հետ միասին։

Ձայների մեծամասնութեամբ որոշվեց քարտուղար ընտրել 2 տարի ժամանակով միայն։ Իսկ ռոճիկն էլ 53 ձայների առաւելութեամբ ընդդէմ 9 ձայնի որոշվեց 2000 ռուբլի տարեկան։

Այս հարցերը որոշվելուց յետոյ նորից նախագահի փոփոխութիւն տեղի ունեցաւ, և, պ. Զերքեզովի նախագահութեամբ, սկսեցին թերթիկներով թեկնածուներ նշանակել։

Թերթիկներով քաղաքային վարչութեան ներկայ քարտուղար պ. Զրելյաիվը ստացաւ 23 ձայն, պ. Սեմեոնով—32 ձայն, պ. Գալստեան—2 ձայն և Թոփչեան—1 ձայն։

Այս վերջինները, ի հարկէ, հրաժարվեցին քուէարկվել, ուստի դրվեցին առաջին երկու թեկնածուների տուփերը միայն։

Պ. Զրելյաիվի օգտին այդպէս քիչ թուով ձայներ ստանալը, ինչպէս երևաց, մի առանկնկալ էր նրա կողմնակիցների համար, ուստի սրանք պահանջեցին, որ ժողովը մի քանի րոպէով ընդհատվի, որպէսզի ձայնաւորները խորհրդակցեն այդ մասին։ Ընդհատում պահանջողները մինչև իսկ սպառնացին՝ հակառակ դէպքում չը մասնակցել ընտրութեանը։ Աւելորդ անախորժութիւնների տեղիք չը տալու համար, որոշվեց ընդհատել ժողովը 10 րոպէով։ Սակայն, ինչպէս վերջը երևաց, ձայնաւորների խորհրդակցութիւնը ոչ մի բանի չօգնեց. քուէարկութեան հետևանքը հետևեալը դուրս եկաւ.

Զրելյաիվ ստացաւ 28 սպիտակ քուէ և 33 սև քուէ, իսկ Սեմեոնով 37 սպիտակ և 24 սև։ Սեմեոնով յայտարարվեց ընտրված։

Գիշերվայ ժամը մօտ 11-ը լինելու պատճառով, դուման չէր ցանկանում անասնաբոյժ պ. Վարդանեանի խնդիրը քննել այդ նիստին։ Բայց պ. Վարդանեան, որ ներկայ էր նիստին, գրաւոր դիմել և խնդրել էր, որ հէնց այդ նիստում վերջացվի իր հարցը, որովհետև ինքը պարաւորված է Բաթում գնալ մի դատաստանական գործով և կարող է շատ ուշ վերադառնալ այնտեղից։ Կարճ թեր և դէմ առարկութիւններից յետոյ, դուման ձայների մեծամասնութեամբ որոշեց՝ քննել Վարդանեանի խնդիրը։

Այդ խնդիրը, ինչպէս և պէտք էր նախատեսել, առագին ժամանակ խլեց. նիստը շարունակվեց մինչև գիշերվայ ժամը 3-ը։

Ձայների մեծամասնութեամբ դուման որոշեց տալ պ. Վարդանեանին 6 ամսվայ ռոճիկ, ազատ կացուցանելով նրան իր պաշտօնից։ Միևնոյն ժամանակ յայտարարել պ. Վարդանեանին, որ Դուման քաղաքային վարչութեան կողմից նրան պաշտօնից արձակելը ընդունում է ոչ թէ այն մտքով, որ պ. Վարդանեանը վատ ծառայող է եղել կամ թերութիւններ է ունեցել իր պաշտօնավարութեան ընթացքում, այլ որ քաղաքային վարչութեան և Վարդանեանի միջև պատահած անախորժ ընդհարումից յետոյ այլ ևս բոլորովին անյարմար կը լինէր նրան մնալ իր նախկին պաշտօնում։

Պ. Վարդանեանը, բարոյապէս իրան վարձատրված զգալով, միանգամայն գոհ մնաց դումայի որոշումից, և նիստը փակվեց գիշերվայ ժամը 3-ին։

Բեպօրտեր

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

I

Այն ժամանակ էլ, երբ հայ երկրում կար աշխարհական իշխան—թագաւոր—ուրոյն դիրք ունէր կաթողիկոսը։

Թագաւորութիւնը պայազատութիւն էր. որդին յաջորդում էր հօրը։ Այդպէս՝ արժանաւորներին կարող էին արեան իրաւունքով յաջորդել և անարժանները։ Այդպէս մենք, որ ունէինք Տիգրաններ և Տրդատներ, ունեցանք նաև Տիրաններ և Պապեր։

Կաթողիկոսների յաջորդութիւնը նոյն օրէնքով չէր։ Արիանը կարող էր նոյնը լինել—որպէս պարթև կաթողիկոսներինը, Լուսաւորիչ Գրիգորից մինչև Մեծն Սահակ—բայց ընտրութիւնը կախումն ունէր ազգութեան ամբողջութիւնից, նրա բոլոր դասակարգերից։

Այդ հանգամանքով՝ կաթողիկոսը որոշ խնդիրներում ազգի ներկայացուցիչն էր, նրա կամքի արտայայտիչը և նաև այդ կամքի առաջնորդողը՝ եթէ նա շնորհներով զարդարված գրաւում էր ազգի համակրութիւնն ու հաւատը թէ իմաստութեամբն և թէ աշխարհավար քաղաքագիտութեամբը։

Որոշ դէպքերում աշխարհիկ իշխանի բացակայութիւնը հոգևոր իշխանին—կաթողիկոսին—էր թողնում առաջնութիւնը ազգի գործերը վարելու խնդրում։ Աւագանին էլ (նախարար, սպարապետ և այլն) նրա շուրջն

էր հաւաքվում, երբ այդ պահանջում էին հարկն ու կարիքը։ Ներքին բոլոր կարևոր գործերը, որպէս նաև արտաքին յարաբերութիւնները, համագումար ազգային խորհրդով էին լուծում ևառնում և ուղղութիւն ստանում, ղեկը կաթողիկոսի ձեռքին։

Առաւել կարևոր և անփոխարինելի դարձաւ ազգի այդ ընարեալի—կաթողիկոսի—իշխանութիւնը, երբ երկիրը՝ իր առանին վարչական անկախութիւնը կորցրած՝ ընկաւ այս կամ այն օտար տէրութեան կատարեալ հպատակութեան տակ։ Այդ ժամանակ հայ եկեղեցին—որ ընդհանուր քրիստոնեայ եկեղեցու ալեկոծութիւններից և տիրապետողական ձգտումներից իրան զերծ պահելու համար առանձնացել էր ժամանակին և ինքն իրան մէջ ամփոփվել՝ ինքնատէր և ինքնիշխան—մէջտեղ երևաց ու մնաց իր կրօնապետով անսասան։

Այդպէս՝ դարեր շարունակ իր երկիրը տակնուվար անող յեղաշրջումների ծոցից հայ ազգը անկախ և ինքնօրէն դուրս բերաւ իր եկեղեցին. մնուցանում էր յոյսեր լաւագոյն ապագայի վրա։

Բայց որքա՞ն էր այդ եկեղեցու դրական արժէքը, որին այդպէս կիպ մնաց և դեռ էլի մնում է հայը։

Ա. Մ. Եղեկեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

(Ա. Արէլեանի «Նշանվածներ» պիէսը Թիֆլիսի հայկական բեմի վրա)

Ա. Արէլեանի «Նշանվածներ» պիէսը, որ ներկայացվեց երկուշաբթի, նոյեմբերի 12-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնի բեմի վրա, նորութիւն էր Թիֆլիսի հասարակութեան համար։ Նա առաջին անգամ խաղացվել է Բաքւում հոկտեմբեր ամսին, այնպէս որ Թիֆլիսի ներկայացումը հերթով երկրորդն էր։

Պիէսը արժանի է կատարեալ ուշադրութեան։ Նա իր մի քանի թերութիւններով հանդերձ կենսական և հետաքրքրական մի հեղինակութիւն է, որը այս տարվայ թատրոնական սեզոնից մուտք է գործում հայ աղքատիկ դրամատիկական repertուարի մէջ։

Նիւթը վերցրած է իրական կեանքից և պարունակում է իր մէջ գունաւոր գծեր, որոնք կրում են իրանց վրա մեր ժամանակից չար ու բարի դրոշմները իրանց վրա։

Պիէսի մէջ լուսաբանված են հին ու նոր կեանքի ընդհարման մի քանի արտայայտութիւնները, հին ու նոր հասկացողութիւնների պայքարը որոշ սահմանում, հին ու նոր հոսանքների ճակատագրական ընթացքը և մեր պատմական կեանքի անցողական շրջանի ճգնաժամային անպատեհութիւնները։

Հեղինակը աշխատել է կեանքի երևոյթների լուսաբանութեան վերաբերութեամբ լինել անաչառ, բայց և այնպէս պիէսից երևում է, որ հեղինակը բացասական վերաբերմունք ունի դէպի նոր կեանքի արտայայտութիւնները և յոռետես է դէպի ներկան։

Պիէսի բովանդակութիւնը հետևեալն է. Երկու ընտանիքներ՝ մի կողմից ծերունի կօշկակար Ցարութիւնի ընտանիքը, միւս կողմից ծերունի պահապան Սահակի ընտանիքը նշանում են իրանց զաւակներին։ Առաջինի որդի Օվանէսը և երկրորդի դուստր Շուշանիկը տեսնվում են միմեանց հետ իբրև նշանվածներ։ Օվանէսը ազնիւ երիտասարդ է, Շուշանիկը գեղեցիկ մի աղջիկ, որի վրա շատերը աչք ունեն, իբրև գեղեցկուհու վրա։ Այդ գեղեցկուհուն հաւանել է փչացած, խաղամոլ, փողեր վատնող Գրիգորը, որը, օգտվելով Սահակի ընտանիքի չքաւորութիւնից, կաշառում է թէ Շուշանիկի և թէ մանաւանդ նրա մայր Գայիանէի սիրտը իր դրամական նուէրներով և դարձնում է մատաղահաս աղջկան իր սիրուհի։ Խորտակված է Օվանէսի բաղդը։ Միևնոյն ժամանակ տնտեսական ճգնաժամի է հասել նրա հօր արհեստանոցը. բանւորները դրել են տնտեսական նոր պահանջներ, որոնց պատճառով ծերունի Ցարութիւնը վճռել է փակել արհեստանոցը և հեռանալ քաղաքից իր ընտանիքով։ Օվանէսը քաղաքից հեռանալուց առաջ գնում է հրաժեշտ տալու իր նշանվածին, Շուշանիկին։ Երկու նախկին նշանվածները խմում են միասին, հարբում։ Բայց Օվանէսի վրդովմունքը չէ անցնում, նա սպանում է Շուշանիկին և վազում դէպի շոգենաւ. նրա ընկեր Գասպարը, որը մի անգամ ազատվել է մահից Օվանէսի շնորհիւ, վերցնում է իր վրա Օվանէսի յանցանքը։ Վարագոյրը իջնում է։

Երկու ծերունիներն էլ դուրս են բերված ազնիւ, բարոյական, աշխատասէր, պատուագգաց։ Նրանք չեն տեսնում թէ իրանց որդիների և թէ առհասարակ երիտասարդների մէջ այն, ինչ որ նրանք ցանկանում էին, և համարում են իրանց յոյսերը խորտակված։ Ներկան, նորը անմխիթարական և անբաւական է, իսկ հինը մաշվել է և չէ կարողանում կենսական ոյժ տալ ապրող սերնդին։

Պիէսի մէջ նկարագրած նոր սերնդի ներկայացուցիչները երկու տեսակի են. մի միւսը փչացած, աբրեցող, խաղամոլ մարդիկ, իսկ մի երրորդ մասը՝ ազնիւ բնաւորութիւններ՝ (Օվանէս, Գասպար) ընկած կեանքի ժխորի ու ալիքների կոհակների մէջ։

Պիէսը ունի բեմականութիւն և հետաքրքրական տեսարաններ։ Կօշկակարի արհեստանոցը, Սահակի բնակարանում եղած հանդիպումները ուշագրաւ են։

Իբրև թերութիւն աչքի է ընկնում պիէսի մէջ հետևեալը։ Պիէսը վերջանում է օտարոտի մելոդրամական եղանակով։ Աւելի բնական կը լինէր, որ Օվանէսը սպանութիւնը կատարելուց յետոյ չը փախչէր։

Նա աւագակ չէր, որ գաղտնի սպանութիւն անէր և իր անձը ազատէր։ Նա յուսահատված և դժբաղդ մի մարդ է միայն։

Գասպարը, որ զրկել էր Օվանէսին այցելելու Շուշանիկին՝ հաշուութեան և ուրիշ խաղաղ ելքի համար, վրդովվում է այն բանից, որ Օվանէսը չէ գիմում խիստ միջոցների, այլ շարունակում է քաղցրախօսել Շուշանիկի հետ։

Կարելի էր սպասել, որ Գասպարը որոշ պահանջներ կը դնէր խաղամոլ, առանդող Գրիգորի առաջ, որ գլխաւոր պատճառն է Շուշանիկի անկման և բոլորի դժբաղդութեան։

Ինչու՞ Սահակը դուրս է բերված այնքան զառամեալ։ Հանդիսականի համար անընական է թւում, որ զառամեալը այնպիսի մատաղահաս աղջիկ ունի։ Կօշկակար Ցարութիւնը չափազանց հեշտ, առանց երկար մաքառման յուսահատվում է և փակում իր արհեստանոցը։

Սահակի պաշտօնից հեռացվելը բոլորովին անընշան կերպով է անցնում, մինչդեռ ընդհանուր բանւորական շարժման ժամանակ նա էլ բարոյական մի դեր ունէր կատարելու։

Արհեստանոցի տեսարանը, որ ոսպաւորիչ տեսարաններից մէկն է, կարօտ է կատարելագործման։

Եթէ այդ և մի քանի ուրիշ թերութիւնները վերացվեն, Ա. Արէլեանի դրաման կը դառնայ հայկական ժամանակակից repertուարի լաւ պիէսներից մէկը։

Հանդիսականների մէջ թեր և դէմ կարծիքներ շատ էին լսվում, բայց ընդհանրապէս պիէսը գրաւել է իր կենսական գծերով և հեղինակը արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Ներկայացումը բաւարար էր, բայց կարող էր աւելի սահուն և լաւ լինել, քան կար։ Մի քանի դերասաններ իրանց դերերը հաստատ չէր գիտէին, մանաւանդ առաջին գործողութեան մէջ։

Պիէսը անսամբլի պիէս է։ Առանձին դերերը այնքան փայլուն ու շքեղ չեն։ Այժը ընդհանրութեան մէջ է։

Առանձին դերակատարներից աչքի էին ընկնում Զարիֆեան՝ Օվանէսի դերում, Արէլեան՝ Գասպարի դերում և Տէր-Դաւթեան՝ Աւետիքի դերում։ Տեղը թոյլ չէ տալիս կանգ առնել դերակատարների խաղի վրա։

Դրամայից յետոյ խաղացվեց «Տօնածառ» պիէսը (գործ Նեմիրովիչ-Դանչենկոյի), որի մէջ գեղեցիկ խաղով հանդէս եկան սիրողուհիներ տիկին Սպենդիարեան և օր. Բերեժանեան։ Վերջինս առաջին անգամն է խաղում հայկական բեմի վրա և վարժվում է հայկական արտասանութեան մէջ։ Տիկին Սպենդիարեանը արդէն փորձված սիրողուհի է։ Տիպիկական էր Զարիֆեան Բաբիկովի դերում։

Սիրող

II

Բաթում, 9 նոյեմբերի

Շաբաթ երեկոյ, ամսիս 2-ին, դերասան Արմենեանը տեղիս ռուս սիրողների հետ ներկայացրեց ռուսերէն լեզուով Դեանչենկոյի «Гувернеръ» յայտնի կօմեդիան։

Ներկայացումը կազմակերպել էր քաղաքիս պարսից հիւպատոս Միրզա Կաֆարխան Ֆարիդ-էլ-Վիզարէն յօգուտ պարսից բարեգործական ընկերութեան, որի նախագահն է ինքը։

Ինչպէս պէտք էր սպասել, ներկայացումը գրաւել էր անագին հասարակութիւն ամեն ազգից էլ անխտիր։ Նահանգապետ գեն.-լեյտ. բարօն ֆօն-Բարկաուն նոյնպէս ներկայ էր իր ընտանիքով։

Ներկայացման աջողութիւնը կատարեալ էր, շնորհիւ Արմենեանի նուրբ խաղին, որը «Гувернеръ»-ում ժօրժ Դօրսիի դերը իւրացրել էր վերին աստիճանի հետաքրքիր ինքնուրոյնութեամբ։ Նրա սահուն ֆրանսերէն արտասանութիւնը և կատարած ռուսերէն ակցէնտը միանգամայն հիացում և մեծ զուարճութիւն պատճառեցին հանդիսականներին։

Անտրակտներում խօսում էին հայ դերասանի տաղանդի մասին, համեմատում էին ռուս դերասաններից լաւագոյն «Гувернеръ» խաղացողների, ի միջի այլոց յայտնի Պրոտիպպի հետ և գտնում էին որոշ տեղերում նոյնիսկ առաւելութիւններ պ. Արմենեանի խաղի մէջ։ Մի քանի տեսարաններից, ինչպէս նաև իւրաքանչիւր արարածից յետոյ հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով բեմ էր կանչում յարգելի դերասանին։ Երրորդ անտրակտին պ. Նահանգապետը անձամբ բեմ գնալով ծանօթացաւ պ. Արմենեանի հետ և ֆրանսերէն լեզուով շնորհաւորեց մեր համակրելի դերասանին։

Այս ներկայացման մասին տեղական «Батумскій Голосъ» թերթը, ի միջի այլոց, գրում է. «Ինչպէս պէտք էր սպասել, ներկայացման ամբողջ հետաքրքրութիւնը կենտրոնացած էր պ. Արմենեանի վրա։ Ճշմարիտը ասելով, պէտք է ունենալ ոչ սովորական կոմիկական յատկութիւն՝ կարողանալ կատարելու համար, առանց չափազանցութիւնների մէջ ընկնելու, ծիծաղելի և հետաքրքրաշարժ կերպով այս հին, արդէն շատ անդամներ խաղացված պիէսան... Պ. Արմենեան, կարելի է համարձակ ասել, զոհացրեց ամենախիստ պահանջներն անգամ»։

«Гувернеръ»-ից յետոյ հայ սիրողների մասնակցութեամբ թուրքերէն լեզուով խաղացվեց «Երկու քաղցածներ» 1 գործողութեամբ վոդեվիլը, որը մեծ զուարճութիւն պատճառեց մասնաւորապէս տեղիս թուրք և պարսիկ հասարակութեան։ Այող էին իրանց դերերում պ. պ. Գ. Իփէկեան, Գ. Փափազեան և Դալատեան։

Առաջիկայ երեքշաբթի, ամսիս 13-ին, պ. Արմենեան կը տայ մի վերջին ներկայացում, ժողովարանի դահլիճում, ի նպաստ տեղական գիմնազիայի չքաւոր աշակերտուհիների։ Կը ներկայացվի, Դէի յայտնի դրաման—«Казнь»—ռուսերէն լեզուով։ Պ. Արմենեան կը խաղայ Գօդդայի դերը։

Հ. Պ.

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ն. և Ս. Աբրահամեաններից 10 բուբլի։ Ուրեմն նախորդ ստացածների հետ՝ 1870 ր. 54 կ.։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՒԱՌԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ն. և Ս. Աբրահամեաններից 10 բուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 9 նոյեմբ.

Համեմատած մեր քաղաքի փոռն հացն ուրիշ քաղաքների նոյնատեսակ հացի հետ, մեր քաղաքի փոռն հացը շատ ստոր տեսակի է։ Մեզանում ներկայումս պատրաստված հացը կիսեփ է, սև և անմաքուր։ Ուրիշ տեղերի երկրորդ տեսակի հացը այստեղի առաջին տեսակից աւելի բարձր որակի է։ Նոյնը կարելի է ասել և միւս տեսակների նկատմամբ։ Եթէ հայոց թաղում փոռն հացի մենավաճառութիւնը մի պարոնի ձեռքին է, այդ չէ նշանակում, թէ քնաթաթախ քաղ. վարչութիւնը պիտի թոյլ տայ, որ մենավաճառողն ինչ ուզում է անի։ Պէտք է այդ ագահ մօնոպոլիստին քաղ. վարչութիւնը փոքր ինչ զսպի և թոյլ չը տայ, որ 17,000 ազգաբնակութեանն իր ձեռքին խաղալիք դարձնի։ Հակառակ դէպքում՝ կարելի է Բաքուից և Թիֆլիսից բոլոր տեսակի հացերից նմուշներ բերել, կընքել և փոռնի ի ցոյց դնել և պահանջել մենավաճառողից նոյնանման հաց պատրաստել։ Պէտք է ասել, որ թոնրի հացը բաւական լաւ է թխվում։

Անցեալ շաբաթ Ար. Բալասանեանը կայարանում կառք է վարձել և երկու կապոց շալեղէն կտորները դնելով կառքում՝ հեռացել է երրորդ կապոցը բերելու։ Վերադառնալով նկատում է, որ հայ կառապանը փախել է։ Նա անմիջապէս կառք նստելով հասնում է քաղաք և կառապանին գտնում է։ Կապոցի մէկը գտնվում է, իսկ միւսը, կառապանի ասելով, ճանապարհին վայր է ընկել...

Սագան

Զալալ-Օղլի, 7 նոյեմբերի

Այս տարի, ինչպէս բոլորն էլ վկայում են, չը տեսնված ձիւն է գալիս. հոկտեմբերի սկզբից մինչև օրս գալիս է ու գալիս։

Ռուսների գետնախնձորը և կալերը մնացել են ձիւնի տակ։ Գիւղացին փայտ չունի վառելու, հաց չունի ուտելու։ Հարկաւոր է տանից դուրս գալ, գնալ անտառ կամ հաց ճարելու։ Սակայն ով սիրտ կանէ այս բուքբորանին տանից դուրս գալու։ Խեղճ գիւղացին մնացել է ձեռները ծոցում, գլուխը քարշ գցած և յուսով սպասում է, թէ վատ օրից յետոյ լաւն էլ կը գայ։ Ահա թէ ինչով է ապրում շրջանիս խեղճ և արիւնաքամ գիւղացին։

Զ.

Վարանդա (Շուշու գ.), 7 նոյեմ.

Թաղավարդում այս տարի հացի պակասութիւն է։ Ներկայումս գիւղացիք ստիպվել են մի նոր միջոցի դիմելու՝ իրանց կարիքը լրացնելու համար։ Բանը նրանումն է, որ Թաղավարդն ունի ահագին քանակութեամբ խնձոր, իսկ այդ բերքն արտահանելու համար ճանապարհներ չը կան, որպէսզի գիւղացիք բերքը ծախեն և ստացված գումարները հացի տան։ Այժմ գիւղացիք ձեռնարկել են խնձորից հաց պատրաստելու հնարքին։ Անցած տարի էլ դդումից էին հաց պատրաստում։

Թաղավարդեցի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիսի կոմենդանտ նշանակված է գնդապետ Զիրկօվը։

✦ Թիֆլիսի քաղաքային դումայից ընտրված մատակարարական մասնաժողովը մի ընդարձակ զեկուցագիր է պատրաստել աշխարհիս հացի շուկայի դրութեան և նոր սակագին նշանակելու կարգի մասին։ Այդ զեկուցագիրը մտադրութիւն կայ ներկայացնել Դումայի քննութեան վաղը, հինգշաբթի, նոյեմբերի 15-ին։

✦ Հալաբարի ստորերկրեայ գաղտնի տպարանի յայտնի գործի քննութիւնը կըբերին յետաձգված է վկաների չը գալու պատճառով։

✦ Կենտրօնական Նպաստ. Յանձնաժողովի գանձապահ պ. Ա. Մելիք-Ազարեան խնդրում է մեզ յայտնել, որ նա հոկտեմբերի 24-ին Ղերինէուղինսկ քաղաքից 3. Մէյրաժդուլեանի ձեռքով ստացել է 21 ր., որ նուիրել են Սիբիրի քահանայ Արիս. Իշխանեանի մատուցած պատարագից յետոյ, պ. Մէյրաժդուլեանի տանը խնջոյքի ժողովված 10 հոգին։

✦ Բաթումից «Кавказъ»-ին հեռագրում են, որ, անընդհատ տեղացող ձիւնի պատճառով, Բաթում-Ախալցխա ճանապարհի վրա, Գօդէրսկի բարձրութիւնից, ձմեռվայ ընթացքում երթևեկութիւնը դադարել է։

✦ Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) «Վարձած ամուսին», վոդեվիլ մի գործ. թարգմ. Արշ. Տէր-Մարուքեանցի, գինն է 30 կոպ., 2) Ս. Հայկունի «Ժողովրդական առակներ», գինն է 30 կոպէկ։

✦ Թիֆլիսի բուսաբանական այգին ներկայումս ունի լաւ տեսակների մեծ քանակութեամբ բանջարանոցների սերմեր, որոնց նա ուղարկելու է սեփական հողաբաժիններ ունեցող դպրոցներին։

✦ Սուրբ-Մարգսի փողոցում № 23 տանը պանդոկ ունեցող գիւղացի Իվան Զիլիշվիլին նոյեմբերի 12-ին յայտնել է ոստիկանութեան, որ նոյեմբերի 10-ին երաստ Կերեսէլիձէի խմիչքեղէնի խանութից գնելով մի տիկ գինի՝ տանում էր իր պանդոկը։ Մայդանի հրապարակում նրա վրա յարձակվեցին զանազան պանդոկների 15 գործաթող ծառայողներ և սկսեցին ծեծել նրան և սպառնացին, որ այլ ևս գինի չը գնէ։ Նոյն մարդիկ, երբ Զիլիշվիլին անցնելիս է եղել Մայդանի հրապարակով, յարձակվում են նրա վրա և սկսում են լաւ ծեծել. իսկ նրանցից մէկը դանակով թեթև վէրք է հասցնում աջ ձեռքին։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհիւ ձերբակալվում են յարձակվողներից 6-ը, որոնց թւում և Մարտին Ցարութիւնեանը, որ դանակով վիրաւորել էր նրան։

✦ Նոյեմբերի 10-ին արքունական թատրոնում, ներկայացման ժամանակ, վիճակագիր Աննա Միկուլինսկայան բեմի վրա խրմում է կարբոլեան թթուաւ։ Միկուլինսկայային ուղարկում են Միքայէլեան հիւանդանոց, ուր, ուշքի չը գալով, մեռնում է։ Ինքնասպանութեան պատճառը անյայտ է։

✦ Լօռու գաւառամասի մեղուաբոյծները դիմել են երկրագործութեան և հողային բարեկարգութեան կովկասի լիազօրին մի հաւաքական խնդրագրով, որով միջնորդում են այդ մեղուաբուծական շրջանը ուղարկել մի յատուկ մասնագէտ անձն՝ փոռախտի (гнилецъ) դէմ կռուելու համար։

✦ Փոխադարձ վարկի Կարսի ընկերութեան գլխաւոր հաշուապահ Ր. Բօժանովը, որ միջնորդութիւն էր յարուցել՝ թոյլատրելու իրան մասնաւոր հաշուապահական դասընթացքներ բանալ Ալէքսանդրօպօլում, այժմ դիմել է Փոխարքային և միջնորդել է թոյլատրել նրան դասընթացքները բանալ ոչ թէ Ալէքսանդրօպօլում, այլ Կարսում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 12-ին, հացթուխ Ալէքսէյ Զարանիձէի փոռն մէջ, որ գտնվում է Սուրբ-Մարգսի փողոցում, գտնվել է կեղծ 3 բուբլանոց։

Զրաց ապնուականների բանկի դռնապանը, որ ապրում է Գօլեաբէվսկի փողոցում, № 6 տանը, յայտնել է ոստիկանութեան, որ նրա բացակայութեան ժամանակ անյայտ մարդիկ կեղծ բանալով զողացել են 100 բուբլու զանազան իրեր։

Վինի զտարիվայրում քաղցրաւենիքի խանութ ունեցող Մարտիրոս Վարդանեան յայտնել է ոստիկանութեան, որ նոյեմբերի 12-ին, երեկոյեան ժամը 9-ին, իր խանութն են մտնում երեք զինված չարագործներ և, մահվան սպառնալիքով վերցնելով 90 բուբլի, անյայտանում են։

Մուլրանսկի փողոցում թոնրապան Գիգօ Նէպարիձէն նոյեմբերի 12-ին յայտնել է ոստիկանութեան, որ ժամը 10-ին 5 անյայտ չարագործներ ներս են խուժում իր թոնրը և մահվան սպառնալիքով յափշտակում են 80 բուբլի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Պետական Դումայի անդամների մէջ լուր է տարածվել, որ Դումայի դիւանատան կառավարիչ Գլինկան թողնում է իր պաշտօնը։ Դրա պատճառը տեսնում են այն բանում, որ Դումայի քարտուղար Սօզանովիչն ու Գլինկան միասին աշխատակցել չեն կարող, որովհետև վերջինս իր համոզմունքով յարում է կադետների կուսակցութեան։ («Б. В.»)

✦ Ծովային մինիստրութեան մէջ, «Б. В.»-ի լրագրի ասելով, երևան է եկել պետական դրամների մի նոր և չափազանց խոշոր վատնումն։ Գլխաւոր յանցաւորը նաւաշինութեան գլխաւոր վարչութեան գանձապահի օգնական Սերգէեվն է։ Վերջինս հոկտեմբերի 25-ին ներկայացել է իր իշխանութեան և արձակուրդ խնդրել իր աչքերը բժշկելու համար և հեռացել։ Բորոմվին պատահաբար, նոյեմբերի 6-ին, Բաքուն է եկել գաղտնիքը։ Ծովային մինիստրութեան հետ համաձայնութիւն կայացնող կապալառուներից ստացվող գումարների մատեանում դեռ ևս հոկտեմբերի 20-ի թուականով յիշված է եղել 37,800 բուբլի մտնելու մասին։ Այդ գումարը ստացել է Սերգէեվը և պիտի յանձնէր վարչութեան գլխաւոր գանձապահ Տուրցեվիչին, բայց չէ արել։ Սերգէեվի կինը ներկայանում է վարչութեանը և յայտնում, որ նա իր ամուսնուց նամակ է ստացել արտասահմանից, որով նա խնդրում է իրան չորոնել։ Այդ մասին զինուորական ծովային քննիչը զինուորական ծովային մինիստրութեան մասնակցութեամբ քննութիւն է կատարել։ Սերգէեվը արդէն մի քանի տարի է որ ծառայում է յիշեալ վարչութեան մէջ, իսկ վերջին օրերս նա վարում էր գանձապահի օգնականի պաշտօնը և լաւ վարձատրութիւն էր ստանում։

✦ Լեհական հարցը, հրէականի նման, նոյնպէս լիովին կը վերապահվի Դումայի որոշման։ Եթէ այդ հարցը հերթական դառնայ, կառավարութիւնը կը յայտարարէ, որ նա անթոյլատրելի է համարում լեհական ինքնավարութիւնը, որպէս ֆեսակար պետական կազմի համար։ Բիւրօկրատիան լեհական հարցին վերաբերվում է աւելի զգուշութեամբ, քան հրէականին։ Լեհական հարցը Դումայում յարուցվելու դէպքում, կառավարութիւնը, ինչպէս լսել է «Тов.» լրագիրը, կանգ կառնէ այն տեսակէտի վրա, որ անհրաժեշտ է մի քանի կրճատումների ենթարկել այն սահմանափակումները, որոնց մէջ դրված են լեհերը և որոնք խոչընդոտ են հանդիսանում լեհերի ազգային կուլտուրայի զարգացմանը։ Նա դէմ չէ լեհական լեզուի դասաւանդութեան իրաւունքների ընդարձակմանը, ի հարկէ, վերջնական որոշ սահմաններում, բայց նա անհրաժեշտ է համարում, որպէսզի մշակվող միջոցները չը դիւրացնէին լեհականութեան պրօպագանդայի հնարաւորութիւնը։ Կրօնի ազատութեան մանիֆեստի վրա հիմնվելով, նա դէմ չէ կաթոլիկութեան քարոզներին, բայց անպայման համարում է անթոյլատրելի կաթոլիկութեան քարոզի անունով լեհականութեան պրօպագանդայի տարածումը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 նոյեմբերի

Թոյլ տուէք հետևեալ տողերին հրապարակ ելնելու։

Կարմիր սուլթանի սարքած ընդհանուր կոտորածների ժամանակ Բաբերդում զոհ գնաց իմ ամուսինը իր ծերունի հօր հետ միասին։ Մեր տունը ամբողջովին թալանվեց, և մեր կեանքը սև դարձաւ։ Այդ սև օրերում ինձ մխիթարող ոչինչ չէր մնացել իմ երկու որբերիցս զատ։ Այնուհետև իմ ամբողջ յոյսը նրանց վրա դրի, յուսալով որ գուցէ նրանք մի օր իրանց հօր տան մարված ճրագը կը վառեն։

Սակայն շարունակվող սարսափները դեռ չէին հեռացել մեր երկրից և սպառնում էին նորանոր չարդերի. դժոխք երկրից փախչել էր հարկաւոր, որ ապահովէր որբերիս կեանքը։

Ինչպէս շատերը, նոյնպէս էլ ես մեր գրանը սև կողպանք զարկի և վերցնելով իմ որբուկներին (Քրիստափորը չորս տարեկան, իսկ Գրիգորս երկու տարեկան) փախայ դէպի Կովկաս ազատ երկիրը։

Չը նայելով որ մենք տարիների ընթացքում խոշոր զրկանքներ կրեցինք այստեղ, այնուամենայնիւ ես մի կերպ զոհ էի, որ որբերիս կեանքը ապահովված էր կոտորածներից։

Այն զուլում օրերից անցել են տասներկու երկար ու ձիգ տարիներ. այդ դաժան տարիներիների ընթացքում ես մատներիս ծայրով հաց եմ աշխատել ու որբերիս կերակրել։

Նրանք մի օր կուշտ, մի օր քաղցած, մի օր տկլոր ու խեղճ, այսպիսի թշուառ պայմանների մէջ ես նրանց վարդի պէս պահել մեծացրել եմ և մինչև տասնհինգ տարեկան հասակը հասցրել։ Վերջին ժամանակները ես ինձ մխիթարում էի մօտիկ ապագայի վարդագոյն յոյսերով։ Քիչ մնաց,—ասում էի,—մի քանի տարի ևս, և իմ վաղուցվայ փայփայած յոյսերը իրականութիւն են դառնալու, որդեակս իրանց հօր տան սև կողպանքը քանդելու են ու մարված ճրագը վառելու, և ես այդ ճրագի լոյսի տակ ազատ շունչ կառնեմ ու քաջալերված առողջութեանս հանգիստ կը տամ։

Բայց աւաղ, իմ բոլոր յոյսերն ու տենչանքներն այսօր երազ եմ տեսնում. իմ թանկագին Քրիստափորը այլևս չը կայ. ես նրան այլևս չեմ տեսնելու. հայ սուլթանները ինձնից խլեցին իմ սիրուն դառնուկին։ Ես այժմ հազար վայ եմ տալիս իմ գլխին. ինչու՞ հեռացայ սուլթանի երկրից. գուցէ նա խնայէր դառնուկիս, որ այժմ ես այստեղ բանտերում չողբայի իմ անմեղ դառնուկին։

Ողբում եմ կորուստս հազար ու մի ձայներով, բայց կարծես շուրջս անապատ է և մարդկային զգացմունքը միանգամայն ժայռացած։ Ոչ ոք արձագանք չէ տալիս իմ դարդին ու վշտին։ Ինչու՞ է այսպէս դառնացել կեանքը։ Ինչու՞ է չարիքը այսպէս համարձակ իշխում, որ նրա դէմ մարդկային արդար զայրոյթն անգամ անկարող է հրապարակ նետվել։ Իմ դառնուկին չուրը չէ խեղդել, և ոչ էլ հրդեհը ճարակել. իմ որբը պատահականութեան զոհ չէ գնացել և ոչ էլ սովորական հասարակ չարագործներն են յօշոտել. այլ նա զոհ է գնացել գաղափարական անունը կրող մարդկանց նենգաւոր ու ստոր դաւադրութիւններին. դա մի կրակ է, սոսկալի կրակ, որ իր ուժգնութեամբ այրում-տապում է սիրտս։

Դահիճների խումբը իր զեկավարներով ծրագրած է եղել անմեղ դառնուկիս դիակը թագցրած թողնել, որպէս զի մի քանի ժամից յետոյ սպանէ եղել նոյնպէս և նրա մտերիմներին. չը նայած որ երեխայ սպանութիւնը կատարել են քաղաքից դուրս ամայի անտառի մէջ, սակայն անմեղ զոհի արդար արիւնը իր դահիճներին անյայտութեան մէջ չէ թողել. սպանութիւնից մի քանի

նի ժամ յետոյ, կառավարութիւնը տեղեկանալով անտառում պատահած դէպքը՝ անմիջապէս խիստ միջոցների է դիմում, և նրան աջողվում է մի-երկու ժամվայ ընթացքում հիւրանոցներից ձերբակալել դահիճների ամբողջ խումբը իր զեկավարներով. ձերբակալված են թւով 14 չարագործներ, որոնք կուսակցական անունը կրում են իրանց վրա։

Եթէ կուսակցութեան ժիսոլորը իր մէջ պատակտում էր առաջ բերել, ինչով էր մեղաւոր իմ անչափաս զաւակը, կամ ես ինչով էի մեղաւոր, որ դահիճների խումբը վճռել էր մայր և զաւակ միասին խողխողել։

Դուք, թիւրքահայ թշուառների պաշտպաններ, ահա թէ արդարութիւնը իր ողբերգական փաստերով ինչպէս է հրապարակում ձեր այլանդակ դէմքերը։ Այս անաւորոճիրը իր ամբողջ մանրամասնութեամբ արդէն ժերկացվել է։ Թող հայ մայրերը լսեն, իմանան, թէ ինչպիսի միջոցներով կոտորվում են թիւրքահայ որբերը։ Կոտորվող երեխաները մէկ չէն, երկու չէն. քանի-քանի սգացեալ մայրեր այսօր ընկել են քաղաքից քաղաք՝ իրանց կորած ձագուկներին մանգալու. բայց, աւաղ, նրանց ոչ ընկած տեղերն է յայտնի և ոչ էլ գերեզմանները։

Հայ մայրեր, դուք մայր էք, կը զգաք իմ կորուստի սոսկալի կրակը։ Թող ձեր ձայնը մինչև երկինք հասնի, որ խղճահարվեն ապառաժ սրտերը. յուզմունքը, արտասուքը ինձ խեղդում են. որտեղ է ճշմարտութիւնը։

Զարուհի Գաղանջեանց

—

Թիֆլիս, 9 նոյեմբերի

Կարդալով «Նոր-Ալիքի» և դրա հայտնի կրկնութիւն «Կովկասի Առաւօտի» վերջին հեռագրերում «Նամակ խմբագրութեան» անունն կրող գրուածքները, որոնցով մեղադրվում է «Մշակը», թէ ինչու սա Ֆրիմեան Հայրիկի թաղման և յաջորդ օրը համար է բաց թողել ու գրաշարներին բանեցրել, ես զարմացայ այդ երկու խմբագրական մարմինների տգիտութեան վրա, որ զետեղել էին այդօրինակ պատմական անհեթեթութիւններ, եթէ աւելին չասենք։

Լինելով անձամբ Բերլինում գերմանական կայսրութեան միացողի՝ «երկաթէ կանցլերի» թաղման շաբթին և դրանից յետոյ Լօնդոնում մեծ-ծերունու՝ Գլադստոնի թաղման շրջանում, պարտք եմ համարում ասել, որ այդ օրերին թէ ողջ Գերմանիայում և թէ Անգլիայում ոչ միայն մի որէ թերթ, ի նշան սգի և յարգանքի, չը դադարեցրեց իր հրատարակութիւնը, այլ ընդհակառակը բոլոր թերթերը չորս-հինգ օր շարունակ դուրս էին տալիս extrablatt-ներ (յաւելուածներ), նուիրված իրանց հայրենիքի մեծ մարդու յիշատակին, և մի րօպէ անգամ թերթերն ու գրաշարները չեին մտածում հոգեհանգիստներ կատարելով պատուել մեծ մարդկանց։ Այլ դէպքեր։ Երբ դրանից շատ առաջ Իտալիայում մեռաւ Մեծ-Գարիբալդին, իսկ Պարիզում՝ մեծ-քաղաքացի Վիկտոր-Հիւգոն, համաձայն իմ ժողոված տեղեկութիւնների («Tribun», «Petit Journal» և այլն), թէ Իտալիայում և թէ Ֆրանսիայում ոչ մի թերթ թաղման և հետևեալ օրերը չէր մտածեց դադարեցնել իր հրատարակութիւնը, այլ, ինչպէս և Գերմանիայում և Անգլիայում, թերթերը մէկը միւսի ետևից հրատարակում էին մեծ մարդկանց կեանքի վերջին ժամերին նուիրված մանրամասնութիւններ, այդպիսով, անկասկած, աւելի յարգելով հանգուցեալների մեծ յիշատակը, քան դադարեցնելով թերթը։ Միայն մեր տիրացու «սօցիալիստ»-ներին է յատուկ աչքակապութեան հասած մանեօվրներով դէպի աւանդական վանք ու հոգեհանգիստները դիմելու՝ խաբելու համար ազգին և վերականգնելու իրանց կորցրած հմայքն ու ժողովրդականութիւնը «աշխատաւոր մասսաների» աչքում։

Հայի սօցիալիստութիւնը խունկ ու ժոմից, հոգեհանգստից ու պրօվօկացիաներից այն կողմը չէ անցնում...։

Եղ՝ սօցիալիզմ... և աւելի խեղճ՝ տիրացու-սօցիալիստներ...։

Ս. Եղիկեան

—

Բագու, 7 նոյեմբերի

«Մշակի» հոկտեմբերի 25-ի համարում, Պ. Զ. ստորագրութեամբ, զետեղված էր մի կարճ քննադատութիւն իմ թարգմանած Հ. Հայնէի «Երգերի Գրքի» մասին, որի առիթով ես կարևոր եմ համարում մի քանի բացատրութիւն տալ։

Նախ.—Քննադատ Պ. Զ. «չէ հասկացել, թէ ինչու գրքի շապկի վրա դրած է նաև ռուսերէն թարգմանութիւնը». —դրած է, որովհետև այդպէս պահանջեց գրաքննիչը։

Երկրորդ.— «Կենսագրական ակնարկում Պ. Զ.-ի նկատած մի քանի սխալ ընորոշումների և լուսաբանութիւնների» վերաբերմամբ կարևոր եմ համարում յայտնելու, որ եթէ Հայնէն գրաւում և ոգևորում է մեզ, դիմում է և տանում մեզ այն աշխարհը, ուր «չը կայ ոչ վիշտ, ոչ հոգս և ոչ թշնամանք»—ապա այդ միմիայն շնորհիւ իր հրաշալի երգերի, իր փոքրիկ երգերի, որոնց մէջ նա ողբում է իր մեծ վիշտը և ողբում է այնքան սրտառուչ, այնքան անկեղծ... Կրկնում եմ, Հայնէն սիրոյ և վշտի երգիչ է par excellence, անեղծ և ամենաանկեղծ երգիչ... Հայնէի հոչակը իր երգերն են...

Ես գրել եմ և կրկնում եմ, որ «Երիտասարդ Գերմանիայի»—և ոչ թէ Հայնէի և Բէօրնէի, ինչպէս ասում է Պ. Զ., որոնք կարող էին անձնականապէս աւելի հեռու ձգտել քաղաքական հարցերում—քաղաքական իդէալը Ֆրանսիայի պետական կազմն էր յուլիսեան միապետութեան ժամանակ—սահմանադրական միապետութիւն։

Երրորդ.—քննադատութեան ընդհանուր տոնից ես եզրակացրի (և եզրակացութիւնս հաստատվեց), որ Պ. Զ. ծանօթ չէ գերմաներէն լեզուին. հետևաբար նա համեմատել է միայն ռուսերէն թարգմանութեան հետ։ Ա... հնչպէս է քննադատը հայերէնի՝ թարգմանութիւնը—հրատարակով «ocesъ апелляцій»—«դրեթէ բաւարար կամ այնքան էլ վատ չէ» անուանում։ Իմ կարծիքով, ռուսերէն լեզուն, թէև աւելի ճոխ է քան հայերէնը, խիստ տափակ է Հայնէի թրթռուն ոգին արտայայտելու համար, և, չը նայած իր կոկ արտաքինին, ինձ թւում է, որ ռուսերէն թարգմանութիւնը չի կարող «կատարեալ» համարվել, որին պէտք է ձգտի հայերէն թարգմանութիւնը։

Զը մոռանամ աւելացնել, որ «Երգերի գրքի» մէջ շատ քիչ ոտանաւորներ եմ բաց թողել, որ սակայն լրացնում եմ հետևեալ հրատարակութիւնների մէջ, քանի որ աշխատում եմ Հ. Հայնէի երգերի լիակատար թարգմանութեան վրա։

Յով. Տէր-Գէորգեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԼՕՆԴՕՆԻՑ

—

Նոյեմբերի 11-ին (Ն. տ.)

Ահա իսկական ոչ միայն աշխարհս, այլ տիեզերքը, կանոնաւոր և կարծէք մատեմատիկական ճշտութեամբ ներդաշնակված ամէն ինչ։ Ընդամէն 7—8 ժամվայ ճանապարհ Պարիզից, սակայն որպիսի խոշոր տարբերութիւն կենցաղի, սովորութիւնների։ Զը կան այստեղ Պարիզի նշանաւոր կաֆէները, այլ կան անհամար թէյատներ, ուր հաղիւ չորս ֆէնիով (15 կօպէկ) դուք կարող էք շատ մաքուր նախաճաշել (թէյ, շօկօլադ, կակաօ, հաց և կարագ)։ Զը նայած որ Լօնդօնը մօտ հազար ժոմ տարած որ Լօնդօնը մօտ հազար ժոմ տարած ծուխեան վրա է փռված (35 անգամ 30 քառակուսի մղոն) և ունի ութ միլիոն բնակիչ, որոնց երթևեկութեան համար կան գետնի տակով երկու (միմեանց վրա) և գետնի վրա մէկ էլեքտրաքարշ, անթիւ աւտօմօբիլներ, օմնիբուսներ և զանազան տեսակ կառքեր ու փողոցները Պարիզի բուլվարների կէս լայնութիւնն անգամ չունեն, այնուամենայնիւ այստեղ դուք չէք լսում այն աղմուկը, չէք տեսնում այն խառնշփոթ իրարանցումը, որ Պարիզում շրմեցնում է ձեզ։

—

Լօնդօնի սեզօնն է նոյեմբեր ամիսը. ամենքը պատրաստվում են ծննդեան տօնին իրանց ապրանքը հանդէս հանելու։ Եղանակը գարնանային է և շատերը առանց պալտօի են փողոցներում։ Նոյեմբերի 5-ը պատմական մի օր է Լօնդօնի համար. 1646 թ. մի կաթոլիկ պատգամաւոր պարլամենտը հրդեհելիս է եղել և կարաններով վառոդ թագցրած այնտեղ, մի անգամից օդը պիտի ցնդեցնէր թէ պարլամենտի շէնութիւնը և թէ բոլոր պատգամաւորներին։ Ժամանակին տեղեկանում են, չարագործին կախաղան բարձրացնում, իսկ այդ օրվայ յիշատակը Լօնդօնում իւրաքանչիւր տարի նոյեմբերի 5-ին կատարվում է հրախաղութեամբ։ Ամէն տան այդ երեկոյ փամփուշտներ են վառվում, նոյնպէս հրապարակներում։

Ապա նոյեմբերի 9-ին Լօնդօնի լորդ-մէրի թագադրութեան թափօրն է։ Թագադրութիւն եմ ասում, որովհետև Լօնդօնի քաղաքագլուխը նոյնպէս թագ ունի, ինչպէս թագաւորը։

Լորդ-մէրը ընտրվում է մէկ տարով. նոյեմբերի 9-ին թափօրը մի գրանդիոզ տեսարան էր։ Անգլիայի Էդուարդ եօթ թագաւորների օրերով անցքերը պատկերացվում են ամենայն մանրամասնութեամբ։ Թափօրի մէջ կային դրօշակներ, որոնց վրա մակագրված էր «Հայ ասպետներ Կիպրոսում», և դրօշակի ետևից, այն ժամանակվայ (խաչակիրների արշաւանքին) ձիերի վրա, գընում էին հայ ասպետները։

Միլիոնաւոր գլուխներ ուրախ շարժվում էին և ամէն մի սերիային ողջունում ծափահարութիւններով։ Որոտալից էր ծափահարութիւնները մանաւանդ, երբ անգլիական նաւատորմիղն էր ընթանում։ Անթիւ զօրք, երաժշտութիւն և վերջը լորդ-մէրը ոսկեայ կառքում, այն շուքով, որ ընթանում է երկրի թագաւորը։

Երեկոյեան 900 հոգուց բանկէտ և երկու հարիւր հազարից աւելի ծախս ընթրիքի վրա։ Քաղաքը պճնված է դրօշակներով, մասնաւանդ Սիթին։

—

Այս րօպէիս Լօնդօնում են գտնվում 5 թագուհիներ՝ Անգլիայի և սրա հիւր՝ Գերմանիայի, Իսպանիայի, Նորվեգիայի և Պորտուգալիայի։ Իսկ արքայազներին և արքայազնուհիներին թիւ չը կայ։ Վիլհէլմ կայսրը այսօր հասաւ Լօնդօն։ Այս գիշեր ծովի վրա է մնացել, որովհետև գիշերս այնպիսի մշուշ էր պատել, որ մի քայլի վրա անգամ ոչինչ չէր նկատվում. էլեքտրիկ լոյսը խոնարհել էր երկրի մառախուղի առաջ։ Ցեռեկները տաք և պայծառ, իսկ գիշերները թանձր մշուշ։ Ասում են՝ արդէն ելք են գտել սրա առաջն առնելու. քամի չը կայ, արհեստական քամի պիտի ստեղծեն և օդում հոսանք առաջացնելով՝ մշուշը պիտի անհետանայ։

—

Առաջիկայ շաբաթ մեծ հարսանիք կայ այստեղ. Օրլէանների մի աղջիկը ամուսնանում է Իսպանիայի մի նշանաւոր դուքսի հետ. հարսնացուի կալուածքում հրաշագեղ հանդէսներ են պատրաստվում և այս հարսանիքի համար են ամենքը իբրև թէ ժողովվել։

—

Այժմս հայերի մասին։ Այստեղի հայութիւնը պատուաւոր դիրք ունի Անգլիայի վաճառականութեան առաջ։ Առ այժմս ասեմ, որ սրանք եկեղեցի ունեն, մտցված է երգեհոն. ներկայ էի պատարագին, որ շատ մեծ հաճոյք պատճառեց ինձ մեր պատարագը երգեհոնով։ Այս մասին մանրամասն այլ անգամ։

—

Տիկին Բաֆֆի իր զաւակներին տուել է պաշտաճ կրթութիւն և ուսում։ Սրանց մասին, նոյնպէս Բաֆֆիի երկրորդ որդու՝ Արշակի մի շատ ուշագրաւ դասախօսութեան մասին հետևեալ անգամ։

Տ. Նազարեան

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Բատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՌՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ
ԶՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵԼԵԿՈՒԹԻՒՆ
(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)
ԹԻՖԼԻՍԻՑ
ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)
Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիոն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիոն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիոն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիոն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։
ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպոլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպոլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպոլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։
ԲԱԳՈՒՄԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։
ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։
ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ.—առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։
ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։
ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Կար ու ձեւի ուսումնարան
Ընդունվում են գիշերօթիկ աշակերտուհիներ. նաև ամիս ու կէս և երեք ամիս դասընթացքով։ Ընդունվում են պատուէրդասընթացքով։ Ընդունվում են ներքինների շորերի, իսկ դեռ կանանց և երեխաների շորերի, դեկտեմբերի 1-ից պատրաստի կը լինեն վաճառելու համար զանազան տեսակ հագուստներ։
Բէհբութեան և Վելեամինովսկի փ. անկիւն, № 19.
(չ. կ.) 1—4

1500 ՐՈՒԲԼԻ գրաւականով
ՈՐՈՆՈՒՄ ԵՄ
կասսիրի, գործակատարի կամ արտելշչիկի ՊԱՇՏՕՆ, գործարաններում, գաստրոնօմիչեսկի, բակալէյնի և ծխախոտի խանութներում։ ՑԱՆԿԱԼԻ ԷՐ գումարով վաճառողների մօտ։ Հարկաւոր դէպքում կարող եմ ներկայացնել թէ լաւ բէկմենդացիա և թէ աւելի գրաւական։ Հասցէս խնդրում է «Մշակի» խմբագրատանը։
6—8

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
„ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ“
Բ. հրատ., վոդրվիլ 1 արարուածով։ Գինը 15 կօպ։ Հրատարակութիւն Կ. Ադամեանի։
Դիմել՝ Թիֆլիս՝ հեղինակին և հրատարակչին «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։
2—3

ԺԱՅՌ
Դրամա 4 գործողութեամբ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
(Առաջին անգամ խաղացված է Թիֆլիսի բեմի վրա 1905 թ. ապրիլի 7-ին)
Պօստի ծախքով գինն է մէկ ՐՈՒԲԼԻ։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустяну.
2—5

Լոյս տեսաւ
Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ“
երգարանը (եւրօպական նօտաներով)։ «ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 երգ, մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.։ Դիմել՝ Баку, Арм. школа, Гимназическая ул., Степану Демурянцу, կամ Моздокъ, С. И. Яралову, և կամ Петербургъ, ред. „Саричъ“, Окрояну. (օ.մ.) 18—30

„ԳՈՒՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում ծախվում է
А. ТУМАНОВЪ
Русско-Армянскій словарь
Գինն է 75 կ. կազմված 1—15
Պօստի ծախքն է 25 կօպէկ
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. Галустяну
4—5

Լոյս տեսաւ
Ա. ՋԱՆԵԱՆԻ
ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԳԻՆԸ 30 Կ.
Գրավաճառների մօտ։ 5—10

ԵՂԲ. ԱՒՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ
ծախում է պտղատու ծառեր՝ արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակները, շատ չափաւոր գներով։ Հասցէն՝ ст. Скра, Зак. ж. дор. Бр. Авсаркисовымъ.
(ե.հ. շ. 13—15

ԲԺԻՇԿ
Ա. Միխթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 46—100

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ա. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 35—100

ԲԺԻՇԿՆԵՐ
Ն. Մ. ՊՐՕԶՈՐՕՎՍԿՈՒ
և Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆԻ
ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ծննդաբերական բաժանմունքով.
Մշտական մահճակալներ
հիւանդների և ծննդկանների համար։
Հանգստի և ընդհանուր պալատներ։ Հիւանդանոցը ունի նոր ապպարատներ էլեքտրականութեամբ և լոյսով բժշկելու համար։ Անվտանգ ոգիներներ։ Բաց է հիւանդներին և ծննդկաններին ընդունելու համար ամենայն օր, ամբողջ տարի։ Ըստ ցանկութեան համախորհուրդներ պրոֆէսսորների հետ։ Պայմանները ուղարկվում են ձրի։ Մոսկվա, Մեսանիցկայա փող., տ. Սարգսանովկու դպրոցի, բնակ. № 73, դուռ № 7, Բանկովսկի միջանցքի կողմից։ Հեռախօս № 214—54. (չ. ու.) 8—10

Զգուշացէք կեղծումներից
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԵՆՍԻ
Գեպկինների, սեռութեան, դեղին բծերի, պուզիկների և պտուկների դէմ։ Անուշահոտ տուալէտային սապոն բարձր արժանաւորութեան։ Ծախվում է ամեն տեղ 1 կտորը 50 կօպ., ½ կտորը 30 կօպ.։ Ոսկէ մէդալ, Լօնդոն, 1893 թւի համար։ Գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկվայում։
(14, 29) 3—25

Բացված է բաժանորդագրութիւն
„ՄԵՐ ՁԱՅՆԸ“
Հասարակական, գրական և քաղաքական օրաթերթ։
«Մեր ձայնը» կը սկսվի հրատարակվել Նոր-Նախիջևանում, 1907 թ. դեկտեմբերի 1-ից, և լոյս կը տեսնի շաբաթը երեք անգամ։
«Մեր Ձայնում» կը տպագրվեն հասարակական գործիչների պատկերներ, կարևոր նկարներ և ծաղրանկարներ։
«ՄԵՐ ՁԱՅՆԻ» տարեկան բաժանորդագինն է՝
Բօստօվում (Դօնի ափին) և Նոր-Նախիջևանում . . . . . 5 ր.
Դրսում . . . . . 6 ր.
Արտասահմանում . . . . . 10 ր.
1908 թ. համար բաժանորդ գրվողները կը ստանան 1907 թ. դեկտեմբեր ամսի համարները Զ Ր Ի։
Բաժանորդագրութիւնը ընդունվում է՝
1. «Մեր Ձայնի» խմբագրատանը, Նոր-Նախիջևան, Եկատերինեան հրապարակ, տ. Մալիեանի, № 20.
2. Բօստօվում (Դօնի ափին) հետևեալ գրավաճառանոցներում. „Наука и Жизнь“, Большая Садовая, Գրանտ Օտէլի հանդէպ, և „Образованіе“, Большая Садовая, Վոլգա-Կամսկի բանկի հանդէպ։
3. Թիֆլիսում «Գուտտենբերգ» և «կենտրոնական» գրավաճառանոցներում։
«Մեր Ձայնին» աշխատակցելու են. հայ գրականութեան մէջ եղած յայտնի գրողները ու հրապարակախօսները։
Խմբագիր-հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
10—1
(չ. շ.)

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. դեղագործների։—Ռուսաստանում թոյլատրված։
ՄԱՏԻԿՕՒ ՍՐՍԿՈՒՄ
—Զգուշացէք կեղծումներից—
Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կարուկ կերպով գործում է պերեւոյի (հնօրէյ) ժամանակ։ Կարճ ժամանակամիջոցում ՄԱՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը։
ԳԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
13—1
(15 և 30)

„ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ“
Վաճառվում են ի միջի այլ դասագրքերի՝
ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ կազմած
1) «ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ» կամ մարդուս մարմնի կազմախօսութեան և բնախօսութեան դասեր. մասն Ի, 2-րդ տպագ., բարեփոխած և 72 պատկերներով ճոխացրած, գինն է 60 կ.։
2) «ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ», համառօտ դասընթաց բնական գիտութիւնների, 57 պատկերով (կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և բուսաբանութիւն). ա. տարվայ դասընթաց, գինն է 50 կ.։
3) «ԶՈՒՐ», տարբերական նախագիտելիք բնական գիտութեան, 11 պատկերով, գ. 35 կ.։
Դիմել՝ Гифлисъ, «Кавказская книжная торговля» Захарія Грикурова. գումարով գնողներին 20% զեղչ. ճանապարհածախսը գնողի վրա։
Նոյն տեղը կարելի է ձեռք բերել նաև այլ հեղինակների ամեն տեսակի դասագրքեր. նոյնը ռուսերէն։
2—4
(չ. ե.)

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаковъ съ С-ми.
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.